# ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 1977

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

# ПРОГРАММА
# СОБИРАНИЯ МАТЕРИАЛОВ ДЛЯ СОСТАВЛЕНИЯ ДИАЛЕКТОЛОГИЧЕСКОГО АТЛАСА АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հr. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎ. ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1977

«Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը» ստեղծվել է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում։ Այն հիմնականում կազմել է բանասիրական գիտությունների դոկտոր Հ. Դ. Մուրադյանը։ «Քերականական զուգաբանություններ» բաժնի կազմությանը մասնակցել են նաև բանասիրական գիտությունների թեկնածուներ Ա. Վ. Գրիգորյանը, Դ. Մ. Կոստանդյանը, Ա. Ն. Հանեյանը։

Ծրագիրը խմբագրել են՝ Հ. Դ. Մուրադյանը, Դ. Մ. Կոստանդյանը, Ա. Ն. Հանեյանը, Մ. Հ. Մուրադյանը, Ա. Վ. Գրիգորյանը (վերջինս մասնակցել է միայն «Բառային զուգաբանություններ» բաժնի խմբագրությանը)։

# ՆԱԽԱԲԱՆ

## 1. Հայերենի բարբառագիտական ատլասը, նրա նշանակությունը

*Ինչպես բոլոր լեզվաբանական ատլասները, այնպես էլ հայերենի բարբառագիտական ատլասը իրենից ներկայացնելու է քարտեզների մի ժողովածու, որի մեջ մտնող միավորներից (քարտեզներից) յուրաքանչյուրը ցուցադրելու է այս կամ այն լեզվական երևույթի տարածման սահմանները։*

*Ատլասը կունենա ինչպես լեզվաբանական, այնպես և ընդհանուր՝ պատմա-մշակութային նշանակություն։ Նրա միջոցով, լեզվաբանական աշխարհագրության մեթոդների ու եղանակների կիրառությամբ, կարելի կլինի լուսաբանել ոչ միայն հայոց լեզվի պատմության ու բարբառագիտության, այլև հայ ժողովրդի պատմության, նրա տարբեր շրջաններում բնակչության տեղաշարժերի, այլ ժողովուրդների հետ հայերի շփման ու կապերի, ազգագրական ու բանագիտական, միջնադարյան ձեռագրերի տեքստաբանական և ուրիշ շատ հարցեր։*

*Ատլասի ստեղծումը, բնականաբար, ենթադրում է կատարվելիք աշխատանքների մի քանի էտապներ, որոն-*

*ցից ամենակարևորը քարտեզագրման ենթակա հատկանիշների ընտրությունն է և նրանց համար նյութերի հավաքումը։*

## 2. Նյութերի հավաքման ծրագրի անհրաժեշտությունը

*Քարտեզագրման ենթակա հատկանիշների համար նյութերի հավաքումը անհրաժեշտաբար կատարվում է հատուկ ծրագրի միջոցով։ Այդ ծրագրի նպատակն է, մի կողմից՝ նախապես որոշել լեզվական այն հիմնական հատկանիշները, որոնք պետք է դրվեն ապագա ատլասի քարտեզների հիմքում, և մյուս կողմից՝ ապահովել այդ հատկանիշների համար անհրաժեշտ նյութերի հավաքումը։*

*Սույն ծրագիրը կազմված է հենց այդպիսի նպատակադրությամբ, որի մշակման ժամանակ հաշվի են առնված նաև հայերենի բարբառների և նրանց հատկանիշների քարտեզագրման առանձնահատկությունները։ Նպատակահարմար է համարվել ծրագրում լեզվական հատկանիշները ներկայացնել զուգաբանությունների[1] ձևով, որը ոչ միայն կանխորոշում է ապագա ատլասի բովանդակությունը, այլև կիսով չափ հեշտացնում է նյութերի հավաքման, դրանց մշակման ու քարտեզներ կազմելու աշխատանքները։*

## 3. Ծրագրի բովանդակությունը

*Ծրագիրն ընդգրկում է հայ բարբառներն իրարից տարբերակող բառային, քերականական ու հնչյունական հատ-*

---

[1] *Այստեղ զուգաբանություն տերմինի տակ պետք է հասկանալ բառային, հնչյունական և քերականական այնպիսի հատկանիշ, որը արտահայտության կամ բովանդակության պլանում տարբերություն է տալիս տարբեր վայրերում։*

*կանիշներ, որոնք դիտարկվում են բարբառների համեմատական քննության ընթացքում։*

**Ծրագրի առաջին բաժինը** *կազմում են բառային զուգաբանությունները, որոնց հիմքում հիմնականում ընկած են հասկացական նույն միավորի դիմաց տարբեր վայրերում հանդես եկող տարբեր անվանումները։ Այս բաժնում որոշ տեղ է տրված նաև այն զուգաբանություններին, որոնք արտահայտում են բառային նույն միավորի իմաստային տարբերությունները՝ տարբեր վայրերում։*

**Ծրագրի երկրորդ բաժինը** *կազմում են քերականական հատկանիշները։ Սրանց առանցքը հայ բարբառների ձևաբանական, մասամբ նաև շարահյուսական համակարգում հանդես եկող տարբերություններն են։ Քերականական զուգաբանությունների հիմքում դրված է այն սկզբունքը, թե տվյալ քերականական իմաստը ձևական ի՞նչ միջոցներով է արտահայտվում։*

**Ծրագրի երրորդ բաժինը** *կազմում են հնչյունական զուգաբանությունները։ Սրանց հիմքում դրված են պատմական հնչյունափոխության այն երևույթները, որոնք բացահայտված են հին հայերենի ձայնավորների, երկբարբառների ու բաղաձայնների հետ կատարված համեմատությունների միջոցով։ Որոշ տեղ է տրված նաև մի շարք հնչարտաբերական ու հնչույթաբանական երևույթների։*

## 4. Ծրագրի կառուցվածքը

*Ծրագիրը, ինչպես ասվեց, բաղկացած է երեք բաժիններից, որոնցից ամեն մեկը համապատասխանաբար ընդ-*

*գրկում է բառային, քերականական, հնչյունական զուգաբանություններ։*

*Բառային զուգաբանությունների առաջին մասում («Հասկացական-բառանվանողական զուգաբանություններ»), որտեղ նպատակ է դրվում պարզել, թե տվյալ հասկացության դիմաց տարբեր վայրերում ինչ բառ-անվանումներ են գործածվում, հոդվածը կազմված է բառաշարքից և հասկացության բովանդակությունը բացահայտող օրինակից։ Այսպես, օրինակ՝*

*56.* Կորիզ—*կոռեզ, կորինձ, կողինձ—կըղազ—կուտ—կոճ—ունդ, հունդ...*

*Ձմերուկի կորիզ, ծիրանի կորիզ, տանձի կորիզ։*

*Այսպիսի կառուցվածք ունեցող հոդվածների բառաշարքի առջևում դրված է հետազոտվող հասկացության գրական անվանումը* (կորիզ), *որին այնուհետև հաջորդում են այդ հասկացության բարբառային անվանումները (կոռէզ, կորինձ, կողինձ—կըղազ—կուտ—կոճ—ունդ, հունդ)։ Հասկացության իմաստը ավելի կոնկրետանում ու հեշտ ընկալելի է դառնում բառաշարքից հետո բերվող բառակապակցությունների (կամ նախադասությունների) միջոցով։ «Կորիզ» հոդվածի «Ձմերուկի կորիզ, ծիրանի կորիզ, տանձի կորիզ» կապակցությունները ոչ միայն կոնկրետացնում են* կորիզ *հասկացության իմաստը, այլև հնարավորություն են տալիս պարզելու տվյալ հասկացության համար օգտագործվող բառի կիրառության ոլորտները։*

*Այն դեպքում, երբ գրական լեզվում բացակայում է տվյալ հասկացության բառային անվանումը, հոդվածը սկսվում է հասկացության բովանդակության բացատրու-*

*թյամբ, որից հետո միայն դրվում են բարբառային բառ-անվանումները։ Այսպես, օրինակ՝*

*27.* **Գլանաձև քար, որ գլորելով ամրացնում էին կտուրի հողը**—*գլորան—գոնել—լողքար—կլտրաքար...*

*Բառային զուգաբանությունների երկրորդ մասում («Բառիմաստային զուգաբանություններ»), որտեղ նպատակ է դրվում պարզել, թե տվյալ բառային միավորին տարբեր վայրերում ինչ իմաստներ են հատկացվում, հոդվածը ունի հետևյալ կառուցվածքը։ Հոդվածի սկզբում դրված է հետազոտվող բառը, որից հետո արաբական թվանշաններով բերվում են այդ բառի բարբառային հայտնի իմաստները։ Այսպես, օրինակ՝*

*517.* **Դեղ**—*1. Բուժման միջոց։ 2. Թույն։ 3. Մկնդեղ։*
*4. Քթախոտ։ 5. Աչքի ծարիր։ 6. Պանրի մակարդ։*

*Քերականական զուգաբանությունների բաժնում հոդվածները ունեն այլ կառուցվածք։ Այստեղ քանի որ նպատակ է դրվում պարզել, թե տվյալ քերականական իմաստը տարբեր վայրերում ձևական ինչ միջոցներով է արտահայտվում, հոդվածում առաջադրվում է հետազոտվող քերականական իմաստը։ Այն սովորաբար դրսևորվում է մեկ կամ մի քանի ձևական միջոցներով։ Այսպես, օրինակ՝*

*576. Տեղանունների հոլովումը՝*

*ա)* **-ի** *հոլովմամբ (Յերէվան—Յերէվանի, Պօլիս—Պօլսի)*

*բ)* **-ա** *հոլովմամբ (էրէվանա, Պօլսա)*

*գ)* **-ու** *(օ) հոլովմամբ (էրէվանու, Պօլսու, Պօլսօ)*

*դ) այլ հոլովումներով*

*Ծրագրում ձևակերպված քերականական իմաստների*

*դրսևորման համար հոդվածի վերջում բերվում են բառեր ու բառաձևեր (տվյալ դեպքում՝ 576-րդ հոդվածի համար սեռական հոլովով տեղանուններ՝ Երևանի, Ագարակի, Ապարանի, Պոլսի, Սևանի, Կարսի, Վանի, Մուշի, Սասունի... և այլն), որոնց լրացմամբ էլ պետք է պարզվեն նշված քերականական իմաստի արտահայտության ձևերը տարբեր վայրերում։ Այդ բառերի ու բառաձևերի քանակը տարբեր հոդվածներում տարբեր է, որ պայմանավորված է տվյալ հոդվածի բովանդակության առանձնահատկությամբ։ Այնտեղ, որտեղ օրինաչափությունը հնարավոր է պարզել երկու-երեք օրինակով (օրինակ՝ խոնարհման համակարգին վերաբերող կետերում), բերվում են սահմանափակ թվով բառաձևեր, իսկ այն զուգաբանությունների դեպքում, որոնց հիմնական օրինաչափությունը հնարավոր չէ բացահայտել մի քանի բառաձևերով, բերվում է այդպիսի բառերի ամբողջ մի շարք։ Նպատակահարմար է համարվել նաև անունների որոշ հոլովական իմաստների ձևական արտահայտության բացահայտման համար դնել շարահյուսական օրինակներ (բառակապակցություններ կամ նախադասություններ), իսկ խոնարհման համակարգին նվիրված հոդվածներում՝ հարացուցային օրինակներ։*

*Նման կառուցվածք ունեն նաև հնչյունական զուգաբանություններին նվիրված հոդվածները։ Այստեղ էլ՝ հոդվածում ձևակերպված զուգաբանության վերջում բերվում են տվյալ հնչյունական օրինաչափության (կամ օրինաչափությունների) բացահայտմանը օգնող բառեր ու բառաձևեր։*

*Այսպես, օրինակ՝ 698. Միավանկ բառերում բառասկզբի* Ե*-ի դիմաց՝*

*ա) է ձայնավոր (եզն—էզ)*
*բ) ի ձայնավոր (եզն—իզ, իզնը)*
*գ) յե ոտաբարբառ (եզն—յեզ)*
*դ) յէ հնչյունակապակցություն (եզն—յէզ, յէզը)*

**եզն, եկ, եո, ես, երբ, երգ, երդ, եփ...**

*Առհասարակ քերականական ու հնչյունական զուգաբանությունները իրենցից ներկայացնում են տվյալ հատկանիշի դրսևորման երկանդամ, եռանդամ կամ բազմանդամ այնպիսի հակադրություններ, որոնցից յուրաքանչյուրը բնորոշ է մի առանձին տարածքի։*

## 5. Նյութերի հավաքումը ըստ ծրագրի

*Ծրագրով նյութերի հավաքումը պետք է կատարել ամեն մի բնակավայրի համար առանձին՝ մի ընդհանուր տետրի մեջ (96 թերթից բաղկացած), մաքուր և ընթեռնելի ձեռագրով։*

*Առանձին դեպքերում, երբ մի քանի բնակավայրեր խոսում են բացարձակապես նույն խոսվածքով, դրանք պետք է ներկայացնել միասին՝ նշելով այդ բնակավայրերը։ Դրանցից պետք է ընտրել այն բնակավայրը, որը ավելի անաղարտ է պահել տվյալ բարբառի հատկանիշները։*

*Տետրի առաջին երկու էջերի սահմաններում անհրաժեշտ է տալ հետևյալ համառոտ տեղեկությունները գրանցվող վայրի, նրա բնակիչների ու խոսվածքի մասին։*

*1. Բնակավայրի անունը (հինը և նորը), վարչական բաժանմամբ ո՞ր շրջանի (գավառի) մեջ է մտնում (մտել).*

*2. բնակչության մոտավոր քանակը.*

3. գրանցման ենթակա խոսվածքի կրողները տեղացինե՞ր են, թե՞ տեղափոխվածներ. եկվորներ լինելու դեպքում նշել, թե որտեղից և երբ են եկել.

4. Հասարակությունը լեզվական տեսակետից համասե՞ռ է, թե ոչ։ Եթե նկատվում են անհամասեռության երևույթներ, ապա դրանք ի՞նչ բնույթի են (այս մասին տեղեկություններ կարելի է հաղորդել խոսվածքին լրիվ ծանոթանալուց հետո)։

Ծրագիրը լրացնողը իր մասին հայտնում է հետևյալ տեղեկությունները.

1. անուն, ազգանուն, հայրանուն.
2. ծննդյան թիվը.
3. կրթությունը և մասնագիտությունը.
4. առնչությունը գրանցվող խոսվածքի նկատմամբ.
   ա) մայրենի խոսվածքն է,
   բ) մայրենին չէ, բայց ապրում ու աշխատում է խոսվածքի միջավայրում (քանի՞ տարի),
   գ) խոսվածքը իրեն խորթ չէ (իր մայրենիին մոտ լինելու պատճառով),
   դ) խոսվածքը իրեն անծանոթ է։

Ծրագիրը լրացնողը տեղեկություններ է հայտնում նաև ինֆորմացիայի աղբյուրների մասին.

ա) գրանցման աղբյուրն ինքն է (ազատ տիրապետում է խոսվածքին).

բ) գրանցման հիմնական աղբյուրը տեղեկատու անձինք են՝ տվյալ բարբառը կրողները (հարցման ենթարկվել են քանի՞ հոգի, նրանց տարիքը, յուրաքանչյուրի՝ բարբառի իմացության աստիճանը)։

*Ատլասի համար նյութերի հավաքումը պետք է սկսել բառային զուգաբանություններից։*

*Բառային զուգաբանությունների առաջին մասը (1—478-րդ հոդվածը) լրացնելիս՝ հասկացության բովանդակությունը ընկալելու համար անհրաժեշտ է կողմնորոշվել դեպի բառաշարքի առաջին բառը և վերջում բերվող բառակապակցությունը կամ նախադասությունը։ Վերցնենք, օրինակ, Ծրագրի 3-րդ հոդվածը՝*

*3. Անտառ—ծըմակ—մէրի—մեշա—քօլ...*

Գնացին անտառ փայտ բերելու:

*Տվյալ դեպքում այս բառահոդվածը պահանջում է պարզել, թե տվյալ վայրում «անտառ» հասկացության համար ինչ բառ են օգտագործում։ Բառաշարքը հուշում է, որ տարբեր վայրերում դրան համապատասխանում են տարբեր անվանումներ։ Ծրագիրը լրացնողի պարտականությունն է արձանագրել այդ հասկացության համապատասխան բառը։ Դրա համար տետրում նախ դրվում է տվյալ հոդվածի թվահամարը, որի մոտ նաև հասկացության գրական անվանումը (3. Անտառ—), այնուհետև* գիտական տառադարձությամբ *լրացվում է այն բառը, որ տվյալ հասկացության դիմաց գործածվում է տվյալ խոսվածքում (ասենք՝ մէշա), որից հետո՝ ծրագրում բերված օրինակը (եթե այն տիպական չէ խոսվածքի համար, կարելի է բերել ինքնուրույն օրինակ)։ Տվյալ հոդվածը լրացված վճակում կունենա հետևյալ տեսքը.*

*3. Անտառ—*Մէշա

*Գնացին մէշա փետ բերելու։*

*Պետք է հիշել, որ հոդվածում բերվող բառաշարքը վերջավոր չէ, հետևաբար հնարավոր է, որ տվյալ հասկացու-*

*թյան համար խոսվածքում գործածվելիս լինի մի այնպիսի բառ, որը բացակայում է բերված բառաշարքում։ Անկախ այն բանից, բառաշարքում կա, թե չկա տվյալ բառաձևը, լրացվում է խոսվածքին հատուկ բառը։*

*Որոշ հասկացությունների համար հնարավոր է, որ չլինեն համապատասխան բառեր։ Դա հատկապես կվերաբերի այն հասկացություններին, որոնք տվյալ վայրում բացակայում են՝ կապված բնակչության զբաղմունքի, կենցաղի պայմանների բնույթի հետ և այլն։ Երբ բառը բացակայում է, այդ հոդվածի թվահամարը և գրական բառը պետք է գրանցել տետրում և դիմացը գրել Չ («չիք, չկա» նշանակությամբ)։*

*Հնարավոր են նաև այնպիսի դեպքեր, երբ տվյալ հասկացության համար խոսվածքում օգտագործում են երկու տարբեր բառեր։ Նման դեպքերում պետք է բերել երկու բառերն էլ՝ նշելով, թե դրանցից ո՞րն է ավելի գործածական (կամ երկուսն էլ հավասարապես գործածական են)։ Այս դեպքում էլ յուրաքանչյուր բառի իմաստը պետք է ամրապնդել նախադասությամբ կամ բառակապակցությամբ։*

*Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բերվող օրինակների վրա։ Դրանց մեծ մասը կազմված է այն հաշվով, որ հնարավոր լինի պարզել տվյալ հասկացության բառային դրսևորման առանձնահատկությունները՝ կապված խոսքային իրադրության և այլ հանգամանքների հետ։ Ուստի որոշ դեպքերում պարտադիր է դառնում այդ օրինակների թարգմանությունը։ Ինքնուրույն նախադասություններ պետք է կազմել այն բառահոդվածների բառերի համար, որոնք չունենալով գրական համարժեքներ՝ չունեն նաև համապատասխան գրական օրինակներ։ Ինքնուրույն օրինակներ կարելի է*

կազմել նաև բոլոր այն դեպքերում, երբ համեմատարվող օրինակը հաջող կամ տիպական չէ տվյալ խոսվածքի համար։

Տվյալ զուգաբանության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելուց հետո պետք է ուշադրություն դարձնել նաև հետևյալի վրա։ Բառաշարքի միավորները, ինչպես ասվեց վերը, տարբեր բարբառներում նույն հասկացության անվանումներն են, բայց կարող է այնպես պատահել, որ այդ շարքի միավորներից մեկը կամ երկուսը տվյալ խոսվածքում ունենան միանգամայն այլ իմաստ ու կիրառություններ։ Օրինակ, հենց վերը բերված «Անտառ—ծըմակ—մէրի—մէշա—քօլ...» շարքում լրացնողը «անտառ» ընդհանուր հասկացության համար մէշա բառը գրանցելիս կարող է նկատել, որ իր խոսվածքում գործածական են նաև ծըմակ և քօլ բառերը, սակայն ոչ «անտառ» նշանակությամբ։ Ծըմակ, ասենք, նշանակում է «մութ, խոնավ վայր» իսկ քօլ՝ «թուփ, ծառաթուփ»։ Այս դիտարկումները ցանկալի է, որ գրանցվեն որպես լրացուցիչ տեղեկություններ, սակայն ոչ առաջին պլանում, այլ միայն հիմնական զուգաբանության պատասխանը գրանցելուց հետո։

Բառային զուգաբանությունների երկրորդ մասի (479—559) հոդվածների լրացումը կատարվում է նույն եղանակով։ Այստեղ հոդվածի թվահամարից հետո գլխատառերով նախ գրվում է բառը՝ ըստ խոսվածքի արտասանության, որից հետո արաբական թվանշաններով թվարկվում են այդ բառի իմաստները, եթե այն բազմիմաստ է։ Բառիմաստային զուգաբանությունները լրացնելիս պետք է նկատի ունենալ, որ գլխաբառը տրված է գրական ուղղագրությամբ, ուստի և

նրան համապատասխանող բարբառային ձևը իր հնչյունական պատկերով և իմաստով կարող է շատ տարբեր լինել նրանից։ Հետևաբար յուրաքանչյուր բառ գրանցելիս պետք է ցուցաբերել զգուշություն ու գործիմացություն։ Բառի բացակայության դեպքում թվահամարից և գլխաբառից հետո դրվում է Չ։

Օրինակներ՝ 517. ՏԵԽԿ — Թույն։

534. ԱՄԻԼ — 1. Լցնել։ 2. Թափել։ 3. Ձու դնել։ 4. Նվազել։

549. ԻՇԽԵԼ — Չ։

Քերականական զուգաբանությունները լրացնելիս պետք է նկատի ունենալ հետևյալը։ Հոդվածում ձևակերպված հատկանիշը և նրա արտահայտության ձևերը լրացնողի համար ունեն միայն կողմնորոշման արժեք։ Այստեղ լրացման ենթակա են այն բառերն ու բառաձևերը, որոնք բերված են հոդվածի վերջում։ Պետք է հիշել, որ քերականական զուգաբանությունների հոդվածները լրացնելիս գրական եզրերը առհասարակ չպետք է գրել։ Գոյականների թեքման օրինաչափություններին նվիրված հոդվածներում նախ պետք է դնել տվյալ բառի բարբառային ուղիղ ձևը և ապա գծիկով (—)՝ թեքված ձևը (օրինակ՝ ախպար—ախպարնէր, աղինք—աղինքնէր և այլն. կամ՝ կընիկ—կընգա, անէր—անօր, բէռ—բէռան, թօռ—թօռան և այլն)։

Բայական համակարգի օրինաչափություններին նվիրված հոդվածները պետք է լրացնել ըստ բերված հարացույցների՝ միայն բարբառային ձևերի գրանցումով։ Այսպես, օրինակ. 626-րդ հոդվածը, լիս ճյուղի բարբառներից մեկի համար լրացնելիս, կունենա հետևյալ տեսքը.

626. գրելիս էմ — գրելիս ենք
գրելիս էս — գրելիս էք
գրելիս ա — գրելիս էն
մընալիս էմ — մընալիս ենք
մընալիս էս — մընալիս էք
մընալիս ա — մընալիս էն

Այսպիսով, քերականական զուգաբանությունների հոդվածները լրացնելիս պետք է բարբառի քերականական ձևերի վերածել այն բառերը, բառաձևերը, որոնք բերվում են այդ հոդվածի վերջում։ Առանձին դեպքերում (երբ չեն բերվում այդպիսի բառեր ու բառաձևեր) պետք է տալ քերականական իմաստի արտահայտման այն ձևը, որի մասին խոսվում է հոդվածում։ Կարևոր է նաև այն նախադասությունների ու բառակապակցությունների թարգմանությունը, որոնց միջոցով պիտի երևա այս կամ այն ձևի քերականական իմաստը։

Հնչյունական զուգաբանությունների հոդվածները լրացնելիս նույնպես հիմնական ուշադրությունը պետք է դարձնել այն բառերի վրա, որոնք բերվում են հոդվածի վերջում։ Դրանք լրացնելիս՝ անպայման բարբառային ձևից առաջ պետք է դնել բերվող գրական (գրաբարյան) ձևը։ Միայն անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր բառի բարբառային ձևը ճշգրտորեն տառադարձված լինի գիտական ուղղագրությամբ, քանի որ միայն այդ ճշգրտությունից է կախված տվյալ զուգաբանության գիտական արժեքը։ Հնարավոր է, որ այդ բառերից մի քանիսը շեղվեն ընդհանուր օրինաչափությունից կամ բացակայեն խոսվածքում։ Անկախ այս կամ այն շեղումից, բառը պետք է լրացնել այնպես, ինչպես այն ար-

*տասանվում է խոսվածքում, իսկ բառի բացակայության դեպքում այն պարզապես պետք է բաց թողնել։ Օրինակ, 715-րդ հոդվածում ասվում է.*

*715. Հին հայերենի* ոյ *երկբարբառի դիմաց՝*

*ա)* ու *ձայնավոր* (ֆոյր—ֆուր)

*բ)* ու̈ *ձայնավոր* (ֆոյր—ֆ'ու̈ր)

*գ)* օ *ձայնավոր* (ֆոյր—ֆօր)

*դ)* ո *երկբարբառ* (ֆոյր—ֆոր)

*ե)* ի *ձայնավոր* (ֆոյր—ֆիր)

*զ)* այ *երկհնչյուն* (լոյս—լայս)

*է)* ուայ, ուօյ *եռաբարբառ* (ֆոյր—ֆուայր, ֆուօյր)

*Եվ այնուհետև բերվում են հետևյալ բառերը, որոնց հնչյունական համապատասխանները պետք է գրել։*

Անոյշ, բոյթ, բոյն, բոյս, գոյն, գոյգ, գրոյց, թոյլ, ընկոյզ, լոյս, ծոյլ, կապոյտ, կոյր, հանգոյց, շոյտ, ողկոյզ, ոյժ, պատրոյգ, պատրոյս, պտոյտ, սովորոյթ, ֆոյր...

*Այս հոդվածը լրացված ձևով (Կարճևանի բարբառի համար) կունենա հետևյալ տեսքը.*

*715. բոյթ—բու̈թ, բոյն—բու̈ն, բոյս—բու̈ս, գրոյց—գու̈րու̈ց, գիրու̈'ց, թոյլ—թու̈լ, ընկոյզ—ա̈նգուզ, լոյս—լու̈ս, ծոյլ—ծու̈լ, կապոյտ—կյա̈'պիտ, շոյտ—շու̈դ, ոյժ—ուժ, պատրոյգ—պա̈տրու̈գ, պտոյտ—պու̈տու̈տ, պիտու̈տ, քոյր—ք'ու̈ր...*

*Ինչպես երևում է լրացվածից, այստեղ բացակայում են* անոյշ, գոյն, գոյգ, կոյր, հանգոյց, ողկոյզ, պատրոյս, սովորոյթ *բառերի հնչյունական համապատասխանները, որովհետև դրանք բացակայում են բարբառում։* Ա՛նգուզ, ուժ, կ'ա̈'-

*պիտ բառերը իրենց հնչմամբ շեղվում են ընդհանուր օրինաչափությունից, իսկ երկու բառեր էլ ունեն հնչման զուգաձևություններ։ Անշուշտ, հնչյունական զուգաբանություններին նվիրված հոդվածները միանման ու միատիպ չեն, բայց բոլոր դեպքերում լրացման ենթակա են հոդվածի վերջում բերվող բառերն ու բառաձևերը։*

*Հնչյունական զուգաբանությունների 768—773 հոդվածներում ձայնավորների՝ շեշտի հետ կապված հնչյունափոխությունը ներկայացնելիս անհրաժեշտ է նաև գրանցել տվյալ բառի բարբառային ուղիղ ձևը և ապա նրա դիմաց (գծիկով)՝ թեքված բարբառային ձևը։ Օրինակ, 773-ի համար՝ ճակատ—ճակտի (կամ մի այլ բարբառում ճէկատ—ճըկատի) և այլն։*

*Լրացման տեսակետից դժվարություն չի ներկայացնում հնչյունական զուգաբանությունների վերջում բերվող բառացանկը (հ. 778), որի ամեն մի բառի դիմաց պետք է գրել այն բառաձևը, որ օգտագործվում է խոսվածքում։ Բառի բացակայությունը պետք է նշել գրական եզրի դիմաց «Չ» դնելով։*

*Ծրագրի վերջում բերված է Հ. Թումանյանի «Սուտասանը», որը պետք է թարգմանել՝ խստիվ պահպանելով գիտական տառադարձության կանոնները։*

## 6. Տառադարձման սկզբունքները

*Ծրագիրը լրացնելիս բարբառային բառերն ու բառաձևերը, նախադասություններն ու բառակապակցությունները, տեքստի թարգմանությունը* պետք է կատարել գիտական

**տառադարձությամբ, որը բոլորի համար միանական ու պարտադիր է:**

*Հայերենի բարբառների գրառման համար ընդունված է օգտագործել գրական հայերենի այբուբենի տառերը։ Բոլոր այն դեպքերում, երբ բարբառի (խոսվածքի) հնչյուններն իրենց որակով համընկնում են գրական հայերենի հնչյունների արտասանության հետ, դրանք արտահայտում ենք հայկական այբուբենի համապատասխան տառերով։ Այն դեպքում, երբ բարբառի (խոսվածքի) որոշ հնչյունների համար գրական լեզվում բացակայում են համապատասխան տառեր, այդ հնչյունները արտահայտելու համար օգտագործում ենք որոշ պայմանական նշաններ, որոնք դրվելով հայերեն տառերի վրա՝ լրացնում են այդ բացը։*

*Պետք է նկատի ունենալ, որ որպես սկզբունք, բառամիջի և բառավերջի դիրքերում արտասանվող պարզ* է (e) *և* o (o) *ձայնավոր հնչյունները տառադարձվում են միայն* է *և* o *տառերով (էրէխա, ադէ, օրօճալ, Կարօ...),* 'ւ *ոչ* ե *և* ո *տառերով, ինչպես ընդունված է գրական լեզվում։ Անհրաժեշտ է հիշել նաև, որ գրանցումների ժամանակ գաղտնավանկերում լսվող* ը*-ն պարտադիր կերպով պետք է գրությամբ արտահայտել (գըլուխ, սըխտոր, մանդըր և այլն)։*

*1. Հայերենի* ա, օ, ու, ի, է, ը *ձայնավորներից բացի բարբառներում հանդիպում են ձայնավոր հնչյունների և այլ տեսակներ, որոնք պետք է արտահայտել հետևյալ պայմանական տառանշաններով.*

*Ա̊ —ետին շարքի ստորին աստիճանի ձայնավոր՝ շրթնայնացման թեթև երանգով. կա Կամոյի և Մարտունու շրջանների խոսվածքներում (Ա̊րա̊մ, կա̊րտոլ).*

Ա̈—առաջնային շարքի ստորին ստիճանի ձայնավոր. տարածված է հատկապես Վասպուրականի, Արցախի և Սյունիքի տարածքի բարբառներում (ա̈րա̈ն, ա̈րին<արիւն, ա̈լա̈ր, ա̈լիր<ալիւր, ա̈ծ<այծ, թա̈մբա̈լ «ծույլ», ք՛ա̈լա̈մ «կաղամբ».

Ö—առաջնային շարքի միջին բարձրացման շրթնայնացած ձայնավոր. տարածված է հատկապես Վասպուրականի, Սյունիքի, Արցախի և այլ բարբառներում (գ՛öմէշ, կ՛öմէշ <գոմէշ, կի̅լöխ, կըլöխ<գլուխ, ք՛öրփա̈ «մատղաշ»)։

Է̌—առավել բաց է, որ ունի ա-ի և է-ի միջին արտասանություն. (կա արևմտյան խմբի մի շարք բարբառներում՝ Երզնկա, Եդեսիա և այլն).

Ը$^{է}$—պարզ ձայնավոր (թեև արտահայտված է երկու տառով). ունի ը-ի և է-ի միջին արտասանություն. տարածված է Սյունիքի, Արցախի, Մոկսի և այլ վայրերի խոսվածքներում (սը$^{է}$րտ<սի̇րտ, քը$^{է}$թ<քիթ, քը$^{է}$ստ<քիստ).

Ի̅—միջին շարքի վերին բարձրացման ը, որ ձայնաբանորեն ընկալվում է որպես ի-ին մոտ հնչյուն (տառադարձվել է ի̅, ըի նշաններով). կա հյուսիս-արևելյան մի շարք բարբառներում՝ Մեղրի, Հադրութ և այլն (գի̅րիլ, կի̅րիլ<գրել, գի̅րիլ, տի̅րիլ<դնել).

Ը̂ — միջին շարքի ստորին ստիճանի ը, որ առկա է եզրային բարբառների (Ղարաբաղ, Սյունիք) խոսվածքներում (տառադարձվել է ը̊ նշանով) (սը̂րտ<սիրտ, ծը̂տ<ծիտ).

Ո̈ւ — առաջնային շարքի վերին բարձրացման շրթնայնացած ձայնավոր. տարածված է Սյունիքի, Արցախի, Վասպուրականի և այլ վայրերի խոսվածքներում (ջո̈ւր ճո̈ւր<

*ջո̈ւր, գո̈ւրո̈ւց<գրոյց, լո̈ւս<լոյս, սո̈ւրո̈ «ոչխարի հոտ»)։*

**Ծանոթություն** — *1) Եթե ձայնավորը տևական է (եր-կար), ապա նրա տևականությունը պետք է նշել՝ տառի վրա դնելով հորիզոնական գծիկ՝* ա̄, օ̄, ո̄ւ̄ *և այլն։ 2) Ձայնավո-րի ոնգային արտասանությունը պետք է նշել՝ գծիկը տառի տակ դնելով՝* ա̲, օ̲, ո̲ւ̲ *և այլն։*

*2. Հայերենի բարբառներում վանկարարի դեր են կա-տարում նաև այսպես կոչված երկբարբառները և եռաբար-բառները՝ ձայնավոր (նաև ձայնորդ) հնչյունների այն զու-գորդությունները, որոնք հանդես են գալիս մի վանկում։ Նման հնչյուններ գրական լեզվում բացակայում են, ուստի և բարբառներում հանդիպող երկբարբառների արտահայտ-ման համար պետք է առաջնորդվել ընդհանուր սկզբունքով, դրանք արտահայտելով ձայնավոր և ձայնորդ տառերի զու-գորդություններով (ուա, ուէ, աու, ըա, ուօյ և այլն)։ Այստեղ բացառություն են կազմում միայն ուօ, իէ, ո̈ւö երկբարբառ-ները, որոնք ընդունված է բառամիջում արտահայտել* **ո, ե, ո̈** *տառերով։Հետևաբար տառադարձման ժամանակ* **ո, ո̈, ե** *տառերից պետք է օգտվել միայն այն ժամանակ, երբ դրան-ցով պետք է արտահայտել բառամիջյան երկբարբառային հնչյուններ։*

*Բառասկզբում գրական հայերենի* **ե**-*ի և* **ո**-*ի դիմաց հանդես եկող երկբարբառային հնչյունները պետք է տա-ռադարձել* **յե** *և* **ւո** *տառանշաններով։ Այն դեպքում, երբ դրանց դիմաց առկա են երկհնչյունային արտասանություն-ներ՝ օգտագործել* յէ, վօ, վու, վէ, վըէ *և այլ հնչյունակա-պակցություններ։*

*Երկբարբառները լինում են բարձրացող կամ իջնող հըն-*

*չերանգով։ Հայերենի բարբառներում դրանք մեծ մասամբ ունեն բարձրացող հնչերանգ։ Իջնող հնչերանգի դեպքում պետք է նշել երկբարբառի այդ որակը. ինչպես՝ ո̄ւ, ո̄ի...*

*3. Բաղաձայն հնչյունների տառադարձման ժամանակ պետք է նկատի ունենալ, որ.*

բ, գ, դ, ձ, ջ *տառերը արտահայտում են բարբառների ձայնեղ պայթական ու կիսաշփական հնչյունները,*

պ, կ, տ, ծ, ճ *տառերը՝ խուլ պայթական ու կիսաշփական հնչյունները,*

փ, ք, թ, ց, չ *տառերը՝ շնչեղ խուլ պայթականներն ու կիսաշփականները,*

բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ *տառերը (որոնք իրենց վրա աջից կրում են փշիկ) արտահայտում են նույն պայթականների ու կիսաշփականների շնչեղ ձայնեղ տեսակները, որոնք առկա են Մշո, Կարնո և մի շարք այլ բարբառներում՝ հատկապես բառասկզբի դիրքերում,*

*գʲ, կʲ, քʲ տառերը արտահայտում են* գ, կ, ք *բաղաձայնների միջնալեզվային (քմային) տարբերակները, որոնք տարածված են մի շարք բարբառներում՝ Ղարաբաղ, Սյունիք, Վասպուրական և այլն (գʲöրունք, կʲա̈րունք, քʲա̈նի<քանի, քʲամի<քամի),*

լʲ *արտահայտում է փափուկ* լ, *ի հակադրություն սովորական* լ-*ի (լʲա̈վ),*

հ՝—*արտահայտում է* հ-*ի ձայնեղ տարբերակը, որ կա Մշո, Կարնո և այլ բարբառներում։*

ղ̂ — *արտահայտում է կոկորդային ձայնեղ կիսաշփական հնչյուն, որ հատկապես լինում է արաբական փոխառություններում,*

**կ̂** — *արտահայտում է կոկորդային խուլ պայթական հնչյուն, նույնպես լինում է հիմնականում փոխառյալ բառերում,*

**հ'** — *միջնալեզվային բաղաձայն, որ ունի* **հ**-*ի և* **յ**-*ի միասնական արտասանություն. կա Ուրմիայի (Խոյի), Վանի և այլ բարբառներում,*

**ր'** — *փափուկ* **r** *(պեր'ան, ար'է),*

**ր²** — *շ-ի թույլ երանգով* **r** *(մար²թ, էր²թալ),*

**հ̂** — *ձայնեղ* **հ** *հնչյունի կոկորդային տարբերակը. կա արևմտյան որոշ բարբառներում՝ հիմնականում արաբական փոխառություններում,*

**ə** — *արաբական փոխառություններում «այն»-ին փոխարինող գիր։*

## ԲԱՌԱՅԻՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱՍԿԱՑԱԿԱՆ-ԲԱՌԱՆՎԱՆՈՂԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լեռ(ն) — *սար* — ... Արարատ լեռ: Մասիս սար:
2. Գագաթ — *կʼա̈կʼա̈թ* — *ծայր*, *ծար*, *ծէր* — *կատար* — *պըտուկ*, *պըտօկ* —...

   Բարձրացավ սարի գագաթը:
3. Անտառ — *ծըմակ* — *մերի* — *մէշա* — *քօլ* — ...

   Գնացին անտառ փայտ բերելու:
4. Քամի — *հօվ* — *ֆըրթանա* — ...

   Քամին ֆշեց տերևները:
5. Ամպ — *թուխպ* — *մըռայլ* — *բուլութ* — ...

   Ամպերը գոռգոռում են:
6. Ծիածան — *ծիրանի գոտի* — *կանաչ-կարմիր*—*աղեղնակ*—*անանակ*—*նըշանակ*—...

   Ծիածանը երևաց:
7. Ցող—*շաղ*, *շօլ*—*մուշուշ*—...

   Խոտերի վրա ցող էր նստել:
8. Կաթիլ—*կաթ*—*պուտ*—*շիթ*—*տոպ*—...

   Մի կաթիլ ջուր: Մի կաթիլ արյուն:

9. Անձրև — *անձվէր — թոն — թօռ — վըրայեկ — թաթավ — թաթախ* — ...

Անձրևը դադարեց:

10. Տեղատարափ անձրև — *շառափ — հեղեղ — սէլ* — ...

Տեղատարափ անձրև եկավ:

11. Կարկուտ — *պըղպըջակ — պոպոռ, պիպեռ* — ...

Կարկուտը փչացրեց արտերը:

12. Արև եղանակին բարակ անձրև — *արևանձրև — արևմաղ — արևցող — գիլածնուկ — գէլցըկնուկ — գէլցըոթել — գիլու հարսանիք — կʼöլաշաղ — կոթաշաղ* — ...

13. Սառույց — *սառուց — սառն — պաղ* — ...

Սառույցը հալվեց: Սառույցի կտոր:

14. Ստվեր — *շուք, շօք, շօխկ — շըվաք — հօվ* — ...

Ծեռուճիները նստած էին պատի ստվերում:

Ծառի ստվերը երկարեց:

15. Գետին — *տափ — տախտ* — ...

Երեխան նստած էր գետնին:

16. Ճանապարհ — *ճամփա — ուղի, հըղէ, հըղաք* — ...

Ճանապարհը անցնում էր անտառով:

17. Կողմ — *կուռ — դի(հ), դեն — ղօլ — յան — թöրափ* — ...

Ո՞ր կողմը գնաց:— Այն կողմը:

18. Գիծ — *ճիզ — խազ* — ...

Գետնին գիծ քաշեց:

19. Ծայր — *ծար, ծէր — ճունդ, ճօնդ — ճոթ — տուտ — պըտօկ* — ...

Պարանի ծայրը տուր ինձ:

20. Շեմ — *շեմք, շեմիկ — սեմ — մըղակ — էշիկ — ախոռ* — ...

Կանգնել էր դռան շեմին:

21. Պատ — *բադ — որմ(ն), հըէրմը* — ...

Պատը փլվեց:

22. Անկյուն — *քունջ — պուճախ — քօշա* — ...

Ավելը դրված էր տան անկյունում:

23. Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան — *պատըրհան — ակնատ — աչկունք — խըլվակ* — ...

24. Տանիք — *տանիս — կտուր — դեներ — ծածք* — ...

Տանիքի վրա ձյուն կա:

25. Առաստաղ — *առասան — առիք, առէք — օճորք — թա-վան — պատալօկ* — ...

Առաստաղից հող էր թափվում:

26. Երդիկ — *երդիս, երդ, հէրթ, հո՛ւրդ — ծխինք, ցխինք* — ...

Ծուխ էր ելնում երդիկից:

27. Գլանաձև քար, որ գլորելով ամրացնում էին կտուրի հո-ղը — *գըլորան — գըռնել — լոխքար — կըտրաքար* — ...

28. Աղբ — *չէխտ — կեխտ — ժեխ — զիբիլ* — ...

Տունը ավլեց, աղբը դուրս տարավ:

29. Աղբանոց — *աղբնոց — աղբահար — ախպիս — գախնոց — ժեխնոց — փողոց* — ...

Հավերը քուջուջ էին անում աղբանոցում:

30. Զուգարան — *արտաքնոց — վոտատեղ — վոտաց ճանա-պարհ — գործարան — փուղոց — պետքարան — հար-կավոր(ություն) — քանաֆ — զախօդ — նուժնիկ — խա-ռաբ* — ...

31. Ջրհորդան — *ճոռնըկաթ — ճոռըստան — ճոռոթան — շը-ռութկան — շըռիկ — նավդան* — ...

Ջրհորդանը շինում են փայտից կամ թիթեղից:

32. Փայտյա այն հարմարանքը, որի միջով ջուրը սրընթաց

վայր ճոսելով պտտեցնում է ջրաղացի անիվը — *նավ, նով — վազ, վաք — բոտ — սարբոտ — սուլ — խարազա — ...*

33. Թոնրի օդանցք — *ակ, աչք — սանդան — հովի ծակ — մաղազա — ...*

Թոնրի օդանցքը բաց արեք՝ կրակը բորբոքվի:

34. Ածուխ — *անձող — գործելի — քոմուր — ...*

Ածուխ լցրու կրակի վրա:

35. Գերեզման — *հանգիստ — շիրիմ. ...*

Գերեզմանին կանաչ խոտ էր բուսել:

36. Գերեզմանատուն — *գերեզմանոց — գերեզմաններ — գիրիզմոտ — հանգստարան — ...*

Կանայք գնացին գերեզմանատուն:

37. Եկեղեցի — *գիղէցի, յէղցի — ժամ — ...*

Քահանան մտավ եկեղեցի:

38. Գյուղ — *գեղ — շեն — ...*

Ապրում է գյուղում:

39. Առու *(արհեստական) — մատակ — արխ — ջըրգընա — կորի — ուրդ — ...*

Առուն ցամաքել էր: Առվի ջուրը կապեցին արտերին:

40. Բահով կտրած բուսախառն հողի շերտ — *ճիմ — ճումբ, ճումնը — ճընարք — կունձ — ...*

Ճիմով կտրեցին ջրի ճամփան:

41. Ցեխ — *տիղմ, տիլ — գըռեխ — ...*

Կոշիկը մնաց ցեխի մեջ:

42. Աթար — *քակոր — ցան — գըղկուր — ...*

Գյուղում առաջ աթար էին վառում:

43. Կայծ — *կէծ — կըծըպուխ — պէծ, պած — փէլ — ...*

Կրակից կայծեր էին թռչում:

44. Փայտ (*որպես վառելիք*) — *փէտ, փատ — ցախ, չախ — ճուղ — ...*

Կրակի վրա փայտ ավելացրու:

45. Կրակ անելու կպչան (*տաշեղ, խռիվ, ծղոտ և այլն*) — *բըռընցկելիք — կըպցընելիք — խուշուր — փաքցանք — կօփուկ — ծըղան — ցըլանք — մարխ — փօռնը — ...*

46. Ծուխ — *մուխ — մօլ — ...*

Թաց փայտը վառվելիս՝ շատ ծուխ է անում:

47. Մոխիր — *մոծիր, մընձուր — փոշի — կրակած հող — ք՚ül — ք՚öզ — ...*

Փայտը այրվեց, մոխիր դարձավ:

48. Արմատ — *տակ — տակռակ — տակմազ — մընձեղ — քօք — ռիշա ...*

*Ծառի արմատը խորն է գնացել:*

49. Տերև — *թուփ — թավ — յափրաղ — ...*

Ծառի տերև: Խաղողի տերև:

50. Ծառերից թափված աշնան դեղին տերևները — *խաշամ, խաշէմնը — խäզäլ — խըրթխաշակ — ...*

51. Հենակ, որ դրվում է պտուղներով ծանրաբեռնված ճյուղի տակ — *խեչակ — խեչմար — դաչա — սարփինա — ...*

52. Խաղողի մատերից էտած ճյուղերը, որոնք օգտագործվում են որպես վառելիք — *արքատ — մովրա — խանձ — չըրփին — ծալամ — օրթօտ — ...*

53. Կեղև — *քեղեբ, կլեպ, քըլեպ — կըճեպ, կըլճեպ, խիչիբ, քիչիվ — ղապուխ — կորճ — ...*

Ծառի կեղև, կարտոֆիլի կեղև:

54. Խեժ *(ծառի) — խիժ — կըռոճ — կըռեզ, կըռեզնը — ծեբօ — քըղըսաղունց — ...*

Երեխան հավաքեց ծառի խեժը:

55. Ընկույզի, նշի, ծիրանի կորիզի պատյանները — *խեճեճ, խըճեպ — խըրթեշ — կորճ — սըռէճ — փուր —...*

Ընկույզի պատյան:

56. Կորիզ — *կոռեզ, կորինձ, կողինձ — կըղազ — կուտ — կոճ — ունդ, հունդ — ...*

Զմերուկի կորիզ, ծիրանի կորիզ, տանձի կորիզ:

57. Սերմ — *ունդ, հունդ — թոխում —...*

Սոխի սերմ, գինձի սերմ, ցորենի սերմ:

58. Եգիպտացորեն — *մըսրացորեն — մըսրի կորեկ — էրուսաղեմա ցորեն — սիմինդր — փըղամբար, խամբար — գըլգըլ — խուրմած կորեկ — լազ, լազուտ — ղըրդալի — կուկուռուզ — ...*

Եգիպտացորենի ալյուրից խաշիլ են պատրաստում:

59. Լոբի — *լոբիա — մաշ — պըլոճիկ, պոլոճիկ — ֆասուլյա — ...*

Կանաչ լոբին խաշում և տապակում են:

60. Դեղձ — *ըշտաղուկ — խոխ, խուխր — շաֆթալու — ...*

Դեղձը համեղ միրգ է:

61. Վայրի տանձ—*պանդա, պանտա—քարճին—ժեռ տանձ—քօլատանձ—բըռի տանձ—...*

Արջը վայրի տանձ էր ուտում:

62. Կաղին — *տըկողին — պնդուկ, ֆընդըխ — տխիլ — ...*

Կաղինը համեղ է չամիչով:

63. Նուշ — *բադամ — շիպիճ — ...*

Նուշը ծիրանի կորիզի նման է, բայց մի քիչ ավելի մեծ։

64. Ընկույզ — *անգուզ, գուզ — պոպոկ — կակալ — ճըղօպուր — կ’օքօվ — ...*

Մի պարկ ընկույզ բերեց։

65. Ընկույզի միջուկ — *մէջ — կըթոն, կըթուն — հէղափ — ճէջ — մըշանուկ — հաց — ...*

Ընկույզի միջուկով ու մեղրով կոզինաղ են պատրաստում։

66. Սնձենու պտուղը (*կարմիր ալոճ*) — *սինձ, սէզնը — ալոճ, ալուչ — խազուրա — ...*

Սնձենու պտուղը հասնում է աշնանը։

67. Ողկույզ (*խաղողի*) — *կուզ — ճիթ, ճութ — ...*

Մի ողկույզ խաղող տուր։

68. Խաղողի մի քանի հատիկներից բաղկացած ողկույզիկ — *ճըռեկ — չըռթիկ — կըռէկ — զընգլակ — զընգուռ, զընգըռա — կընթեռ — տըլլակ — ...*

69. Ցոգոլ — *ցոգոլակ, ցըղոլե — չաղալա — վըրտոց — մախծ — ...*

«Ցոգոլ» հատկապես ասում են ծիրանի պտղին, երբ այն դեռ կանաչ ու խակ է։

70. Ձնծաղիկ — *խըլոպուզ — խընձաղա — ...*

Ձնծաղիկը գարնան առաջին ծաղիկն է։

71. Երեքնուկ — *սիրի-սիրի — խընձործաղիկ, խընձըրծաղիկ — ...*

Երեքնուկը ցողունի վրա ունենում է երեքական տերևներ և գնդաձև ծաղիկներ։

72. Բարդի — *հոփի — խավաղ* — ...
Բարդու ծառից գերան են պատրաստում:

73. Սաձիլ — *շիթիլ — սէդէր* — ...
Սաձիլները անկում են վաղ գարնանը:

74. Ճակնդեղ — *բազուկ — տակ — կըլըմբոզ, կալամօզ — ճալխար — շավանդար* — ...
Կարմիր ճակնդեղը խաշում, ուտում են:

75. Ճակնդեղի տերևներ—*բազկաթեր—ճավ, ճավիկ—ճոռ—ճալխարի—թեր—տակի քոլ—փըրշ*—...
Ճակնդեղի տերևներից թթու են դնում:

76. Գազար—*ստեպղին, տեղպինդ, տէպղին—փըրշըքլի, փուռշուլուզ*—...
Երեխան գազար էր ուտում:

77. Տաfդեղ—*բիբար—ծիծակ—հէմէմ—խոթ, սոթ*—...
Կանաչ տաfդեղ գնեց:

78. Դդում—*ղութմա—բըրանի—ղողրա—կարկաժ*—...
Դդումի կորիզ, դդումի մուրաբա:

79. Երկար կոթով, սնամեջ գլխով դդմի տեսակ, որ չորացնելուց հետո ծակում և օգտագործում են որպես աման— *դդմակ, ղըթում—կարկաժ, կիրկիժ, կարկաճ—կոկոշ—տոլ—կըռնեպ*—...

80. Դանդուռ—*փերփեր, փռուփառ, պրպերան—մառնօկ*—...
Դանդուռի թթու:

81. Եղինջ—*եղիճ, աղինջ, հաղինջ, աղին—մըրմընջուկ—բանջար—կըճան—շըպըրբուկ—խարդալ*—...
Եղինջը կծան բույս է:

82. Ուրց—*խուռ, խոռնը—թիմ*—...
Ուրցը աճում է սարերում: Ուրցով թեյ:

83. Ծնեբեկ—*ծընեբուկ*, *ծընէփակ — գինէփուկ — մալաժոր*—...

Ծնեբեկի դալար ցողունը տապակում են:

84. Փիփերթ — *բալբա—հաց ու պանիր—աղջըկտակ—աղջըկուտակ—ջընջըղահաց—պոճուկ—կիտատի*—...

Փիփերթի սերմը կոճակի ձև ունի:

85. Սամիթ—*տէրաղօթիկ—շըվիթ*—...

Թթվի մեջ սամիթ դիր:

86. Հարդ—*հերդ, էրթ—դարման*—...

Կովի առջև մի քթոց հարդ լցրեց:

87. Ծղոտ—*ծըղնոտ—ծեղ—կըտրոն—ք՛ու̈լաշ*—...

Ցորենի և գարու չոր ցողունները կոչվում են ծղոտ:

88. Հասկ—*կըռուծ—սըմբուլ*—...

Ցորենի հասկերը թափվում են:

89. Հնձելիս՝ մանգաղի և գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը—*լաս, լաստ—ծոր, սոր—բըռնոտ*—...

90. Ճմլած խաղողի մնացորդը, որից օղի են քաշում—*չանչ, չեչ, ջեջ(ա)—կընճեռ—շըվուք*—...

91. Ջամբյուղ—*զամբուլ—սաւլա(կ)—սäբäթ—կալաթ*—...

Ջամբյուղում կար դեղձ, խաղող և թուզ:

92. Կողով—*կըթոց, քըթոց—հöրդէշտ—խէֆէր—սակառ*—...

Կողովները բարձեցին ձիուն:

93. Փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թոկի ծայրին և նրանով ձգում թոկը՝ բեռ բարձելիս—*գաք, գէք, կէփ—կափլուկ—կանկիչ—կոռ—ակոլ—կոշ*—...

94. Փայտյա կոթավոր գործիք, որով կալսած կալը ժողովում են մի տեղ (*որոշ վայրերում օգտագործվում է նաև*

*հարթ կտուրներից ձյուն թափելու համար)—մըղան—հալ—կարղան...*

95. Առոր—*հարօր, խարօր—վօսկի, վէցկի—չորէց, չորոց—չուլթ—գործին—կէռ—...*

Հնում հողը վարում էին փայտյա արորով:

96. Փոցխ *(ձեռի)—կըռանդիլ—ճանկռիկ—սանդըր—...*

Ցրված խոտը հավաքեց փոցխով:

97. Եղան—*յըղղլե—երկումատ—...*

Եղանով խոտը բարձում էր սայլին:

98. Քլունգ—*ըրկօսի—թոխր—կիրկի—փատատ—...*

Կարծր հողը քանդում են քլունգով:

99. Շեղբ—*շեղբիկ, շըղուփ, չըղպըլիկ—սըլիկ—լէստ—...*

Շեղբը անկոթ դանակի բերանն է:

100. Հեսան—*լեսան—եղասըրոց—սըրոց—եղաքար—...*

Հեսանով դանակ էր սրում:

101. Մեխ—*գամ—բևեռ, պիպեռ—...*

Մուրճով մեխը խփեց պատին:

102. Մեծ անցքերով մաղ, որ գործածվում է ցորենը, գարին ծղոտից անջատելու համար—*խախալ—փոկեմաղ—շատարար—կալեմաղ—սառատ—...*

103. Ակիշ — *ակիշթաթ—թաթ—թաթակիշ — տաշտաքեր—տաշտաքերիչ—...*

Տաշտի խմորը քերում են ակիշով:

104. Մի ծայրը ճանկավոր, մյուսը թաթի ձևով երկար մետաղյա բարակ ձող, որով հաց են պոկում ու հանում թոնրից—*թաթակիշ—խացկան, խացհան—ծըհան—շամփուր—շիշ—...*

105. Խորիզ—*խորիսխ—հէս, հաս—...*
Խորիզով զարթա: Խորիզ դի՛ր խմորի մեջ։

106. Թթխմոր—*տըխտըմոր—խաշ—խըմոր—...*
Թթխմորով հունցած խմորից լավ հաց
է ստացվում:

107. Ջրաղացաքարի չորս կողմը նստած ալյուրի փոշի—*զամբ, զըմբ—պատալուր—օրա—դուշէնգիլէր—...*

108. Խնոցի—*ծըծում, ձըձում—ծըփոց—...*
Խնոցու կարագ:

109. Փլավքամիչ—*բրինձքամ—քամիչ, քէմուց—...*
Բրինձը քամեց փլավքամիչով:

110. Կարաս—*կիսակարաս, կիսկարաս—տուճ, տուճիկ—քո-ցի—սեոիկ—...*
Գինին պահում են կարասի մեջ:

111. Կճուճ—*պուտուկ—պուլիկ—բըղող—լուկ—...*
Կճուճում պահում էր յուղ, պանիր:

112. Ունկ *(ամանների)—անգըղ, անղ—տանգ—կանթ, կըն-թա—կոթ—խուլփ—...*
Կճուճի ունկը պոկվել է:

113. Կովկիթ — *կըթոց — կաթնաման, կըխցաման — քըթէշ—սաղընտոս—...*
Կովկիթն առավ, գնաց կովն ու ոչխարները կթելու:

114. Հացահատիկ չափելու փայտե աման—կոտ—*խան-լաք—կըսալաք—չարէք—կըռաղ—ուպլաղա—...*

115. Տիկ—*տըկճոր—կուպրուն—...*
Հնում տիկի մեջ պահում էին գինի, ձեթ, յուղ,
պանիր:

116. Մածնի տոպրակ—*թանխոռք—պարզոն—քամոց—մածնաքսակ—պարկուճ*—...
Մածնի տոպրակը կախել էր մեխից:

117. Ջուր խմելու կավե, պղնձյա գավաթ—*փարչ—ջրրածիկ—ջրրխմիկ—դոլչա—թաս—բադա*—...

118. Խցան—*պընդան—պրոբկա—թափփա(ն)*—...
Խցանով փակեց շշի բերանը:

119. Ձագար—*զաքար—քամոց—խոնի — գովրկ — ծապլի, զապոի—ըոըթի*—...
Գինին ձագարով լցրեց շշի մեջ:

120. Ջրաղացի այն արկղը, որից ցորենը թափվում է աղորիքի մեջ—*ամբար դոխ(ն)—տաշտ—քուզա—ողում, օղուն—օլուղ*—...

121. Ճախարակ—*չըխարակ—ջահրա—ճայր*—...
Ճախարակով թել են մանում:

122. Իլիկ — *թեշի—առիչկան—դուզ, դուք—քարման—մանիչ, մէնէչ*—...
Պառավը իլիկով թել էր մանում:

123. Շյուղ—*շուղ—ճաղ—միլ—շիշ*—...
Շյուղերով գուլպա էր գործում:

124. Պարան—*թոկ—քուղ, քօղ—չվան — չաթու—ճոպան — ք՚ա̈նդիր*—...
Պարանով կապեց ձիու բեռը: Լվացքի պարան:

125. Կապերտ—*կարպետ—ձունձ—ջուլ, ջօլ*—...
Թախտը ծածկված էր կարպետով:

126. Անկողին—*գողինք—տեղ, տեղեր—տեղաշոր—ջուլ*—...
Հոգնած մտան անկողին և քնեցին:

127. Ակնոց—*աչից—աչոց—չաշմակ*—...

Կարդում էր ակնոցով:

128. Համրիչ—*տերողորմյա—թեզբեհ, թըզբեխ*—...

Պապը գցում էր համրիչի հատիկները՝ մտքում կրկնելով «խեր—շառ—աստված»:

129. Վզից կախվող զարդարանք—*վզնոց—ճտնոց—զիսկ—բօշմաղ*...

130. Ձեռնոց—*թաթման—թաթնոց—թաթվան—ալչակ*—...

Ցուրտ էր, հագավ ձեռնոցները:

131. Գոտի—*գոտիկ—մեջկապ—քամար—ղայիշ—ջառ, ճար—թօխկա*—...

Տղամարդու գոտի, կանացի գոտի, շալե գոտի, կաշվե գոտի, արծաթյա գոտի:

132. Օձիք—*փողպատ—յախա*—...

Բռնել է օձիքից ու թափ է տալիս:

133. Վարտիք — *վոտաշոր—փոխան—շապկընկեր*—...

134. Քղանցք *(զգեստի)—փեշ, փեշկ—փառակ—ագի—տուտ, տօտնը*—...

Քղանցքը քսվում էր գետնին:

135. Տրեխ—*չարուխ*—...

Գյուղացին հագավ տրեխները:

136. Տրեխի քուղ — *տըրեխչըվան* — *տըրեխետեն, տըրխատան*—...

Տրեխը հագավ, քուղը ձգեց ու կապեց ոտքին:

137. Բարձրակրունկ, սրաքիթ կոշիկներ—*մաշիկ—չմոշկ—սոլ—կոնդուրա*—...

138. Սյունից սյուն (ծառից ծառ և այլն) պարանով կապած օրորոց—*ճոճ(ք)—ճըղոթ, ճըղչոր—ծանտըրմակ—լալու—օրան—կախօրան—զամզոխ—...*

139. Բարուր—*բալուլ—փաչուչք—ղունդաղ, ղունդուղ—...*

Երեխայի բարուրը բացեց:

140. Տակաշոր—*կըտավիկ—քաքաշոր—վոռնոց—փալաս...—*

Երեխայի տակաշորը փոխիր:

141. Օրորոցից մեզը դուրս բերող փայտե խողովակ—*պօկսիմակ—լօլակ, լուլիկ—շիբէք—...*

142. Օժիտ—*բաժինք—պըռույգ—ջիհէզ—ղումաշ—...*

Աղջկան ամուսնացրեց և մեծ օժիտ տվեց:

143. Խնամախոս—*ուզընկան—պատկամավոր—...*

Խնամախոսներ եկան աղջիկ ուզելու:

144. Աշքալուսանք — *ականջբռնուկ—աչքաբռնուկ—ականջկալա—անգըճգըլա—...*

Աշքալուսանք ուզեց:

145. Հարսանիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ—*մակարներ—մանկըտիք, մոմկըտիք — ազապներ—...*

146. Կնքահայր—*կընքավոր, ընքավուր, քավոր—բէլ, պէլ(ի)—կընքապապ—պապ—...*

Քահանան երեխային հանձնեց կնքահորը:

147. Կնքամայր—*կընքամար—քավորկին, քավորկընիկ—բէլակին, պըլակին—մամ, մում—սանամար, սանամէր—...*

Կնքամայրը հագցրեց կնքված երեխայի շորերը:

148. Ծաղկազարդի տոնը — *ծառզարդար, զըրզարթար, ծառազարդ—ծառկոտրունք—հըռօխնիք—...*

149. Նոր տարի (*տոնը*)—*կաղանդ—լօլէ*—...—
Նոր տարվա համար միս գնեցին:
150. Ծննդկան—*ծընըղկան, ծըմըթկան—տղոցկան—տղացկան*—...
Ծննդկանին խավիծ տվին:
151. Մանկաբարձուհի (*ինքնուս*)—*տատմէր—տիկմար—դայեկ*—...
Տատմերը մոտեցավ ծննդկանին:
152. Երեխա—*ըրախա—ճիժ—խօխա—տըխմար—չօջուխ—ուշաղ—չաղա*—...
Երեխան լաց էր լինում:
153. Տատ(իկ)—*մամու, մամէ, մամի—մեծ մայր—ջոջիկ, ջոջու—դադե, դեդի—նանա, նանի—բաբօ*—...
Տատս՝ հորս մայրը, հարյուր տարեկան է: Տա՛տ, մի հեքիաթ պատմի՛ր:
154. Սկեսրայր—*կեսրար, կեսար—պատրոն, պատրուն—պարոնպապ*—...
Սկեսրայրը շատ էր սիրում հարսին:
155. Տերտերակին—*իրիցկին—տիրուհի, տիրօխնի, տըրխուրի—դիրակէն*—...
Տերտերակինը լվացք էր փռում:
156. Քահանա—*տէրտէր—դէր—երեց, իրից*—...
Քահանան օրհնեց սեղանը:
157. Անեռորդի—*աներձագ—աներտըղա—միրզամ—անէր—դայնա*—...
Փեսան տուն կանչեց աներորդուն:
158. Ամուսին—*էրիկ, իրիկ—մարդ—տըղամարդ—գըլխավոր—հայ*—...

Ամուսինը սպասում էր կնոջը:

159. Մայր, մայրիկ—*մար, մէր, մարէ—մամ—նան, նանէ, նանի—ազի, հազի—ադե—աչի, աճի—այա*—...

Մայրը կերակրում էր երեխային: Մայրի՛կ, ինձ մոտ արի՛:

160. Այրի—*վորբէվերի—էրիկկնիկ—դուլ*—...

Այրին դժվար էր պահում երեխաներին:

161. Տագերկին—*տէքրակին, տէքըրկընիկ—նէր*—...

Տագերկնոջ ատամը ցավում էր:

162. Հայր, հայրիկ—*հար, հէր—պապ—դադա—ապա, ապի, ափո—կակօ*—...

Հայրս ուրախ մարդ էր: Հայրիկ, դուռը բա՛ց:

163. Մորեղբայր—*քեռի—դայի*—...

Մորեղբայրս ամուսնանում է:

164. Ծերունի—*հալէվոր, հըլիվուր—պառավ—ըխտիար—բիձա*—...

Ծերունին կանչեց կնոջը:

165. Արու զավակ—*տըղա—մանչ—լաճ, լաջ*—...

Ի՞նչ ունես, տղա՞, թե աղջիկ:

166. Հարևան—*դրացի—դըրկից—տընկից—պատկից*—...

Հարևանի հարսը սիրուն է:

167. Մուրացկան—*մուրական—ուզվոր, օզօղ—ժողովարար, ժողովքրար—ճարընկան—փայ հըվաքող—ախկատ*—...

Մուրացկանը նստած էր եկեղեցու պատի տակ:

168. Ջրաբաշխ—*ջըրբաշխ—ջըրպետ—ջըրբաժան—մըտկապան—ջըրվար—միրաբ—սուլջի—սիթաչի*—...

Ջրբաշխը կարգավորեց ջրի բաշխումը:

169. Որսորդ—*որսկան, ֆորսկան—նէճիրվան—ավշի*—...

Որսորդը նապաստակ սպանեց:

170. Հովիվ — *նախրորդ—նախըրչի—տավարած—չոբան—...*
Հովիվը ոչխարի հոտը տարավ սար: Հովիվը կովերին տարավ ջրելու:

171. Հոտ (*ոչխարի*)—*գիհ—կըտիր—ճուղ— սուրու —...*
Ոչխարի հոտը արածում էր սարի լանջին:

172. Անասուն—*էսսօն — տավար — ապրանք—հայվան—մալ—...*
Նա ուներ 20 գլուխ անասուն:

173. Գոմշաձագ—*ձագ—մալախ—պըլեճ—մօզի—...*
Գոմշաձագը մտավ ջուրը:

174. Կրիա—*կիրիրա—կըրիանկոտ, կոտ կըրիա—կուրյան—կույրօշ — տաշտակ—կըտրաշտակ—կըռնակոտ—գըռոշ—թըսկուրի—տաշտեկըռնակ—...*
Երեխաները կրիա էին բռնել:

175. Չղջիկ—*թըռչող մուկ—մըշկաթև, մըշկաթելուկ—շառվառ—գիշերհավուկ—կաշաթև—կորեխ—սեկեմուկ—ըլըկօշկօշ—...*
Չղջիկները թռչում են մթության մեջ:

176. Մողես—*մողոզիկ — մըկլեզ—խըլէզ—քաշալ աղջիկ—քարաթոթոշ...*
Մողեսը տաքանում էր արևի տակ:

177. Կարիճ—*կոր—կըռահագի—տատ—...*
Սև կարիճը խիստ թունավոր է:

178. Սարդ—*գործարար—երնջակ—հինած հինուկ—մամուկ—մանոզակ — սանտրագործիք — սարանդօստիկ—սատանա—բօ—ջուլհակ, չուֆլակ—...*
Սարդը ոստայն է հյուսում, ճանճեր որսում:

179. **Որդ(ն)** — *ճուռը—ճիճու—...*

Խնձորենու տերևները որդերը կերել են:

180. **Անձրևորդ** — *գիռնըկամէր — ճսուգՕխտիկ—սուղալ—ճի-ճու—...*

Անձրևից հետո անձրևորդերը շատացան:

181. Ցեց — *մըղմող, մըղմուղ—վորթ—կօրկ—...*

Փայտի ցեց, շորի ցեց:

182. Մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա՝ ճանճերի նստելուց հետո — *ծեսուկ, զիդօկ, ծեծուկ—պիծեկ—պըծիզնը—...*

183. Մոխրագույն մեծ ճանճ, որ խայթում է անասուններին — *բոռ, բոռեղ—մոզ, մոլոզան—կէտ—կընէտ—մօռ—գյուվէնտ—...*

184. Զատիկ — *զատկի բլոճ—մարիամ բլոճ—կովածընուկ—...*

Զատիկը կարմիր, պուտավոր միջատ է:

185. Լուսատտիկ — *աստըղաքակ—ծըկոռի—կեծոռիկ, կա-ծօռ—պուրուտ—լուսիկ—...*

Խավարում լուսատտիկները թռչող կայծերի են նմանվում:

186. Խխունջ — *կողինջ, կողլանջ—ձըկանանկաջ—պառվու ճու-տեր — սընկըլիանկաջ — խուճուճուր—ալախաթուն—դավի հըլուն—...*

Խոնավ տեղերում խխունջ շատ է լինում:

187. Թռչուն — *հավք—ձագ—ղուշ—չիտ—...*

Թռչունը ձու է դնում:

188. Հնդկահավ — *կուռկուռ—կոռել—ճուրճուր—շանթավուղ—ֆրանգի հավ—հունդուշկա—...*

Հնդուհավը ծանր-ծանր շրջում էր բակում:

189. Փայտփորիկ—*ծառծակի, ծըռծակի, ծառծակիչ, ծառծակուկ—ծառակուտուտ, ցըռըկոտկոտ—...*

Փայտփորիկը կտցահարում է ծառը:

190. Բու—*կօնդօ—հօլօլ—քօռաքու—(քոռ) յափալըղ—...*

Բուն ցերեկը չի տեսնում:

191. Կաչաղակ—*քըշէղակ—անձէղ—քաղանծեղ—...*

Կաչաղակի պոչը երկար է:

192. Հոպոպ—*յուպուպ, իպիպոպ,—պուպու—փըփու—բիբիճուր—...*

Հոպոպը գլխին սանր ունի:

193. Աքաղաղ—*աքլոր—որձակ, ո̈րձա̈կ—խոսող, գոսող—խօրօզ—ճետ—դիկ—...*

Աքաղաղը կանչում է լուսաբացին:

194. Վառեկ—*դօխ—...*

Վառեկը հավի մեկ տարեկան էգ ձագն է:

195. Թուխս—*թըխսկան—կըռթան, գըռթան—ձագմար—...*

Թուխսը իր ճտերին հավաքեց թևերի տակ:

196. Փետուր—*թեփուռ—բըմբուլ, բըլբուլ—թույ—բըբուկ—...*

Ագռավի փետուրները սև են:

197. Թռչունների ստամոքս-պարկը, ուր հավաքվում է կերած կուտը—*կըտաման—կըտնամբար—կըտնառք—քըշաման — քուչ—թըթուց, թըծուծ—փըջուջ—թուջուջ—թուճուճ—ճուչիկ—փօչիգ—...*

198. Հավի կրծքի երկճղի ոսկրը—*հավքաշ—ջընաղ, ջընագ—աղես—մարջ—...*

199. Ձու—*հավկիթ, հավտիկ—խավծու—...*

Հավի ձու գնեց: Թռչունները ձու են ածում:

200. Պոշ—*ագի, հա̈քի*—...
Ձին պոշով fշում էր ճանճերին:

201. Խայթոց (*մեղվի, կրետի, կարիճի*)—*խարտ—լիթան—խըթիչ—կիճ, կէճ—փուշ*—...
Մեղուն խայթեց, խայթոցը մնաց մատիս մեջ:

202. Ատամ(ն)—*ակռա, աղռա, առգա—կեռիք*—...
Նրա ատամը ցավում է:

203. Սեղանատամ—*ջաղացատամ—աղօրիք—սողնակ—սէ-ղան*—...
Սեղանատամներով ծամում են:

204. Մատ—*մատըն, մաննը—բա̈լթ, պա̈լթ*—...
Ձեռfի մատներ: Ոտfի մատներ:

205. Բութ մատ—*մեծ մատ—ուլիգ—պա̈թնը, բիթ—լուպ*—...
Բութ մատը դանակով կտրել էր:

206. Ճկույթ—*ծիլիկ—չըդիկ—ծըծիննը—ծըկէյնը—քուչըկ մատ*—...
Ճկույթը արնոտել էր:

207. Բուռ—*մուշտ, մօշտ—հափուռ—ճանկ—ափ—ավուճ*—...
Մի բուռ ջուր խմեց: Մի բուռ ցորեն վերցրեց:

208. Բռունցf—*կըռուփ—դըմբուզ—մուշտա—բոմփ, բոմբ—գամփոց,—գոմբ, կըմբիկ—կոծ, կոնծ—ղըմբուրուղ, յումբրուղ—զըմզուղ*—...
Բռունցfով ուժեղ հարվածեց մեջfին:

209. Ոտf—*վօտ, օտկ, վէննը, ուռ—աք, հաք—չիվ, ճիվ*—...
Մարդու ոտf: Ձիու ոտf: Հավի ոտf:

210. Ազդր—*անդամ, անդէմնը—բուդ—թութագ—բալդըր*—...
Մարդու ազդր: Կովի ազդր: Հավի ազդր:

211. Պարանոց—*վիզ—ճիտ—կօլ—շըլինք—...*
Երեխայի վիզ: Հորթի վիզ: Հավի վիզ:

212. Կոկորդ—*փողք—բուկ—կըլդիկ—բօղազ—...*
Ձկան փուշը մնաց կոկորդում:

213. Ծոծրակ—*ծործորակ—ծոծոփ—խըզատակ—պուճուճակ, պոճոճակ—ծամտակ—...*
Ծոծրակը քորեց:

214. Մեջք—*մէջկ, մաշկ—թիկունք—կըռնակ—պառէկ—...*
Մեջքի վրա պառկած էր:

215. Կուրծք *(մատակի, կովի, ոչխարի, այծի)—կուրծ, ուրծ—նուռ, ուռ—ծիծ—...*
Կովի կուրծքը լիքն էր կաթով:

216. Եղջյուր — *ախչիր — պոզ—կոտոշ—գոնչ—ղոչ—բույնուզ—...*
Կովի եղջյուրներից մեկը ընկել էր:

217. Ողնաշար—*իլիկ—հուռ—շարօն—շարողիկ—սեռ—մըշկասէռ—մէճկի լüլä—միջոց օսկոր...*
Ողնաշարը կոտրվել է:

218. Կրճիկ—*կըռճուկ—հըրճհըրճուկ—խըռխըռթիկ—ղըռճիկ, խըռճիկ, խըրճուկ—...*
Երեխան կրճիկ էր ուտում:

219. Թևատակ—*կըռնատակ—անթ, հունթ—անթատակ—ղօլթուղ—...*
Գիրքը թևատակին գնում էր դպրոց:

220. Շուրթ, շրթունք—*պըռոշ, բըռեշք—պըռուկ, պըռունկ, պըռկունք, պըռկըտի—...*

Վերին շուրթը ուռել էր:

221. Արտևանունք—*թերթերունք—թարթիչ—թերթևանունք—թարթափ—թըփըլիկ—թիմթիմօկ*—...

Արտևանունքները թափվել էին:

222. Լյարդ—*լերթ—սև թոք—սև չիգյար—սիվուց չիգ՚ար*—...

Հիվանդի լյարդը ուռել է: Տավարի լյարդ տապակեցին:

223. Միզապարկ — *փուչիկ — բուշտ—փամփուշտ—փըլըն-փուշտ—փքլուճ—շըռոտուն*—...

Միզապարկում քար կա:

224. Մեզ—*գող, կ՚üզ—ցէթ—շեռ—չըրվէթ—պուզ*—...

Մարդու մեզ: Տավարի մեզ: Շան մեզ:

225. Խոշոր եղջերավորների (*կով, գոմեշ*) կղկղանք—*թրիք—կույ*—...

226. Ձիու, էշի, ջորու կղկղանք—*փըթիր—փըշկուղ—ֆըշղա—թըրինք*—...

227. Ոչխարի, այծի կղկղանք—*կըտըտոր—պըտըտոր—բըգուր—պըտուկ—կըտիտ, գիդիդ—ղըբըլդուր*—...

228. Պզուկ—*բուշտ, բըշտիկ—մոծուկ—շիտ, շըտիկ—հատ*—...

Դեմքին պզուկներ էին դուրս եկել:

229. Ուռուցք — *ուռէցք — ուտէց—պոլոճակ—փըքլուճ—սիգիլ*—...

Ոտքի վրա մի մեծ ուռուցք կար:

230. Վերք—*խոց—գան, կան—զախմ—բըրին—յարա*—...

Վերքից թարախ է գալիս:

231. Թարախ — *գ՚ըռէխ — ժահըր — վահր(ը)—շարավ—չէրք*—...

Վերքի մեջ թարախ կա:

232. Լորձ, լորձունք—*փըսլինք, փըցլինք, բըրցըլինք—ցըմբիլ—շողիկ, շողուք, շորունգ*—...

Ձիու բերանից լորձ էր թափվում:

233. Ընկերք—*ընկեր—ծին—սըրբանք—դեգ*—...

Հորթը ծնվել էր, ընկերքը դեռ չէր ընկել:

234. Գորտնուկ—*կոծոծ—շըղտուկ—բօրդանծըծիկ*—...

Մատների վրա գորտնուկներ կային:

235. Գարեկ — *կըլըգտրուկ—պոպոտիկ—տիկնակլունձ—կըտուց—պիճ—խըլուպուզ*—...

Գարեկը առաջանում է աչքի կոպի վրա:

236. Թարախոտ կոշտ վերք, որ գոյանում է կրունկի վրա—*քարխեծ — քարգոխ — քարկիճ—քարկոխ—նասրադի*—...

237. Տենդ—*ջերմ—ջերմուտանդ—էրոցք էրուցք—տաքցող, տաքող—տաքօթկ—ցօրդ—դօղէրօց*—...

Երեխան տառապում է տենդից:

238. Կարմրուկ—*վարդախտ—վարդածոց, վարդի ծոց—հարսանեթ, հարսանօթ*—...

Կարմրուկը մանկական վարակիչ ճիվանդություն է:

239. Հարբուխ—*խարփուխ—մըխտաժանք—շոբ—չօռ—խըռընցավ—նավազիլ*—...

Հարբուխի ժամանակ փռշտում են:

240. Թույն—*դեղ, դեխկ—աղու—ճար—զեհիր*—...

Թույն խմեց ու մեռավ:

241. Հոգեհաց—*հօկկոց—համպոյս—մեռլահաց—ժամահաց—ծընկնահաց—բաղարաք—քելեխ*—...

Հոգեհաց տվեց ննջեցյալի պատվին:

242. Ընթրիք—*իրիկնահաց—իրիվգուն—հրամեն, խրամեց—պաշիվ*—...

Երեկոյան նստեցին ընթրիքի:

243. Թանապուր — *ապուր — սպաս, պաս—թանօվ—թանապուր—հըրածած*—...

Թանապուրը պատրաստում են թանից կամ մածնից՝ ձավարով կամ բրնձով:

244. Խաշ—*սակատ—փաչա—քյալափաչա*—...

Տավարի տոտիկներից պատրաստված խաշ:

245. Կաթնապուր—*կաթնով—գա̈րդա̈—կաթնասպաս*—...

Հիվանդին կաթնապուր տուր:

246. Հում կաթի սեր—*կաթսեր—արաժան—ման—յայմաղ—կըխցիրիս*—...

Կաթի սերը քաշել եմ:

247. Դալ—*խիժ, խէժնը—խեր—կըռուր*—...

Նոր ծնած անասունի կաթը եփելով ստանում են դալ:

248. Մածուն—*թան*—...

Հարսը մի աման մածուն մերեց:

249. Ձվածեղ—*յէղըձու, յըղըձու—աղուն տախտեղուն—մըկլահավկիթ—տապակհավկիթ*—...

Զոքանչը փեսային ձվածեղ տվեց:

250. Իր հյութի և յուղի մեջ տապակած միս, որ կճուճների մեջ պահում են որպես ձմռան պաշար—*տըհալ—ղաուրմա—տոճորակ*—...

251. Հալած դմակից մնացած կտորները—*խարխըծին, խարխընծի—խարխըզին, խարխիզա, խարխոզիկ, խորխոզին—տըժվըժիկ—տըհալի պտուղ—խըզոռ—քըզիկ—կտորէճ*—...

252. Ճարպ—*ճըրագու—փի—ճէնճ*—...
Այծի ճարպով տրորում են մրսածի մեջքը:

253. Դոշաբ—*դեղա—մաթ—ռուփ—բա̈քմա̈զ—դըխս*—...
Դոշաբ պատրաստում են թթի, խաղողի քաղցուից:

254. Գաթա—*բըլիթ—բիշի*—...
Գաթայի խորիզը քիչ էր:

255. Բաղարջ—*կըլոճ—կըրկենի—պըռզոն—տըրմուզ*—...
Բաղարջը թխում են առանց խորիզի:

256. Ձավար—*կորկոտ, կուրկուտ—ծեծած—բըլղուր*—...
Ձավարը պատրաստվում է ցորենից:

257. Աղանձ—*ղա̈նձուտ—խածաղ, խեձաղ—կարկատ*—...
Մայրը երեխային աղանձ տվեց:

258. Խաշած ցորեն, կանեփ և այլ ընդեղեններ, որ լցնում են կաթնատամ հանած երեխայի գլխին՝ մյուս ատամների հանելը արագացնելու համար—*ակռահատիկ—ակռասորիկ — ատամսորիկ — կեռքահատիկ, կեռահատիկ—հատիկ—կըճախաշ*—...

259. Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք—*ծոխանք—ծողողանք — ճընճուլ—քորուք, քերիչք—տըկունք*—...

260. Հալած յուղի տականք—*աղիչք—խալինչք—թանիչք—թալիշկ, թալինչք—վըռք—քափ*—...

261. Ծամոն—*մաստակ—սախկըզ—սաղունձ—ձութ—ալկ*—...
Հարսը ծամոն էր ծամում:

262. Հոլ—*ֆըռիկ—դըժիկ—վըժիկ, վիժըռնեկ—պըզզան—բուլդի—...*

Հոլը պտտվում էր նույն տեղում:

263. Ճոճանակ—*ճըլորթի—ճըղլոր, ճըղոր—ճոլորիկ—յակուրչի—չըղչոր—ճօնչի—ճօնչլակ—ճինգեխ—կախոռան—կախանչորակ—...*

Երեխան ճոճանակ էր նստել:

264. Տիկնիկ—*տիկին — խըմաճիկ, խումաճիկ—խըրձիկ—պուպրիկ, պուպուկ — պուրհիկ — հարսնուկ — կուկլա—...*

Աղջիկը խաղում էր տիկնիկով:

265. Քարկտիկ — *քարքըշտիկ — հափկանք—ապուկ—հինգ քար—փամփաստ—խիչիր—մօլլաբըրի—...*

Քարկտիկը խաղում են հինգ մանր կլոր քարերով:

266. Ճան—*վէգ, օգ—կիվ—կոռ—լէլէշ—կոճ, կոճի—աշուղ—...*

Երեխաները ճան էին խաղում:

267. Սրինգ—*շըհու, շըվի — պըկու—թութագ—բըլուլ—դուդուկ—ղավալ—...*

Հովիվը սրինգ էր նվագում:

268. Ումպ—*կում, ղում—կուլտ, կըլտում—բունգ—փուկ—...*

Մի ումպ ջուր խմեց:

269. Համբույր—*պագ—պաչ—պըռոշտի—...*

Մի համբույր տուր:

270. Ապտակ—*ճըլոթ—ափլէզ—թընթըլօշ—սիլլա—ղամար—չափալաղ—շամաղկ—...*

Մի ապտակ հասցրեց նրան:

271. Բութ մատի և ցուցամատի միջև եղած բացվածքը—*քիլ(ք)—ճերթ—միլ—չըռթիկ—թիլ—ըռուբ—...*

272. Հայհոյանք—*հիշոց, ուշունց—քուֆր—...*

Մի թունդ հայհոյանք տվեց:

273. Երկյուղ—*վախ—ահ, այ—խօֆ—...*

Սիրտս վախ ընկավ:

274. Ոխ—*քէն—մուռ—վըրեժ—փըռմոխ, փըռմոխթ—...*

Ոխ ուներ նրա դեմ:

275. Ժամանակ—*ժուկ—ատեն—պահ—գահ—վախտ—...*

Ճիշտ ժամանակին տեղ հասանք:

276. Առավոտ—*ըռութանա—քիշանա, քիշերավ—խըլխսուն—կանուխ—վաղմընցօվ—...*

Հիվանդը չքնեց մինչև առավոտ:

277. Կեսօր—*քըսօր—հորսակ—ճաշ—խըրամէնց—...*

Աշխատեցին մինչև կեսօր:

278. Իրիկնապահ—*իրիկնաժամ—իրիկնադէմ—յետինք—հըրամեց, խըրամէց — հըրամգահ — վերջինք—ժըմաժանք—մըթնաժոռ—էվար—...*

Գյուղացիները տուն վերադարձան մինչև իրիկնապահ:

279. Գեղեցիկ—*սիրուն—աղվոր—խորոտ(իկ)—նախշուն, նախշուտ—աղկէկ—ըռունդ—...*

Նա գեղեցիկ աղջիկ է:

280. Լավ—*աղեկ, աղուր—օքուտ—խասս—...*

Լավ մարդ, լավ գինի, լավ ապրուստ:

281. Մեծ—*վէնձ—ջոջ—բէդ, պէտ—խոշոր—...*

Ճամփին ընկած էր մի մեծ քար:

*634.* Անցյալ *կատարյալի եզակի երրորդ դեմքի դրսևորումը մի խումբ բայերում՝*

*ա) արմատական հիմքով ու նախահավելվածով* (երեկ, երետ, է-լաց // իլաց, իբեր // իպի=*եկավ, տվեց, լացեց, բերեց*)

*բ) ներգործական վերջավորություններով* (եկուց, տըվեց // տըվուց, լացեց, բերեց)

*գ) կրավորական վերջավորություններով* (եկավ, տըվավ, լացավ, բերավ)

առավ, բացեց, բերեց, դրեց, եկավ, զարկեց, թողեց, լացեց, ճասավ, նստեց, տեսավ, տվեց

*635. Վաղակատար ժամանակի դրսևորումը՝*

*ա) վաղակատար դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ* (գրել եմ, գրեր եմ, գրիր իմ)

*բ) հարակատար դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ* (գրած եմ *«գրել եմ»)*

| | | | |
|---|---|---|---|
| գրել եմ | գրել ենք | գրել էի | գրել էինք |
| գրել ես | գրել եք | գրել էիր | գրել էիք |
| գրել է | գրել են | գրել էր | գրել էին |

զարմացել եմ զարմացել ենք զարմացել էի զարմացել էինք
մնացել է գյուղում, տուն է շինել, ճաց է կերել

*636. Հարակատար ժամանակի առկայություն. Նրա դրսևորումը՝*

*ա)* -ած *վերջավորությամբ դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ* (գրած եմ, գրած էի)

*բ)* -ուկ *վերջավորությամբ դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ* (գրուկ եմ, գրուկ ի)

*գ)* ման (մօն) *վերջավորությամբ դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդմամբ* (գրման ա, եփման է)

| | | | | |
|---|---|---|---|---|
| գրած եմ | գրած ենք | գրած էի | գրած էինք | գրած չէ |
| գրած ես | գրած եք | գրած էիր | գրած էիք | սիրած չէ |
| գրած է | գրած են | գրած էր | գրած էին | խաբված չէ |
| սիրած եմ | սիրած ենք | սիրած էի | սիրած էինք | քնած չէ |

| | | | |
|---|---|---|---|
| սիրած ես | սիրած եք | սիրած էիր | սիրած էիք |
| սիրած է | սիրած են | սիրած էր | սիրած էին |
| խաբված եմ | խաբված ենք | խաբված էի | խաբված էինք |
| խաբված ես | խաբված եք | խաբված էիր | խաբված էիք |
| խաբված է | խաբված են | խաբված էր | խաբված էին |

637. *Բայի դիմային վերջավորությունների նույնացում՝*

*ա) անցյալի եզակի և հոգնակի առաջին դեմքում* (ես գրեր ենք, մենք գրեր ենք)

*բ) հոգնակի առաջին և երկրորդ դեմքերում* (մենք գրել եք, դուք գրել եք)

*գ) անցյալի եզակի թվի բոլոր դեմքերում* (ես կգրեր, դու կգրեր, նա կգրեր)

| | | | |
|---|---|---|---|
| գրում էի | գրում էինք | գրում ենք | գրում եք |
| գրեցի | գրեցինք | գրելու ենք | գրելու եք |
| գրել էի | գրել էինք | կգրենք | կգրեք |
| գրեի | գրեինք | | |

խմում էի
խմում էիր
խմում էր

638. *Ըղձական եղանակի անցյալ ապառնիի արտահայտությունը՝*

*ա) հին հայերենի անցյալ անկատարի տիպի բայաձևերով* (գրէի, գրէիր, գրէր... գրի, գրիր, գրէր...)

*բ) հին հայերենի անցյալ անկատարի եզակի երրորդ դեմքի բայաձևի վրա դիմային վերջավորությունների հավելմամբ* (գրերի, գրերիր, գրէր, գրերինք, գրերիք...)

| | | | |
|---|---|---|---|
| գրեի | գրեինք | մնայի | մնայինք |
| գրեիր | գրեիք | մնայիր | մնայիք |

| | | | |
|---|---|---|---|
| գրեր | գրեին | մնար | մնային |

639. *Պայմանական եղանակի արտահայտությունը՝*

*ա) ըղձական եղանակի բայաձևերի և* կը (գը, կա, գա...) *եղանակիչի հարադրությամբ* (կը գրեմ, կըգրէի)

*բ) դերբայով և օժանդակ բայի ժամանակային ձևերով* (գրիլ իմ, գրիլ իմ լ̈ըլ...)

| | | | |
|---|---|---|---|
| կգրեմ | կգրենք | կմնամ | կմնանք |
| կգրես | կգրեք | կմնաս | կմնաք |
| կգրի | կգրեն | կմնա | կմնան |
| կասեի | կասեինք | կկարդայի | կկարդայինք |
| կասեիր | կասեիք | կկարդայիր | կկարդայիք |
| կասեր | կասեին | կկարդար | կկարդային |

640. *Հարկադրական եղանակի արտահայտությունը՝*

*ա)* պիտի *եղանակիչի (կամ նրա հնչյունական տարբերակների) և խոնարհվող բայի ըղձական եղանակի ժամանակների հարադրությամբ* (պիտի գրեմ, տի գրեմ, դը գրեմ, բի գրեմ, պետմա գրիմ, մատիլ գրիմ...)

*բ) բայի անորոշ դերբայով և* պիտիլ *բայի խոնարհված ձևերով* (գրիլ պիտեմ, գրիլ պըտես, գրիլ պըտի... գրիլ տեմ, գրիլ տես, գրիլ տի...)

| | | | |
|---|---|---|---|
| պիտի գրեմ | պիտի գրենք | պիտի գրեի | պիտի գրեինք |
| պիտի գրես | պիտի գրեք | պիտի գրեիր | պիտի գրեիք |
| պիտի գրի | պիտի գրեն | պիտի գրեր | պիտի գրեին |
| պիտի մնամ | պիտի մնանք | պիտի մնայի | պիտի մնայինք |

641. Ե *խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի կազմությունը եզակի թվում՝*

*ա)* իր (ի, էր, իյ) վերջավորությամբ (գրի՛ր, գրէ՛ր, գըրի՛)

*բ)* է *(ա) վերջավորությամբ* (գըրէ՛, կիրա՛...)

ապրի՛ր, բռնի՛ր, գրի՛ր, եփի՛ր, խաշի՛ր, խմի՛ր, խոսի՛ր, ծամի՛ր, ծիծաղի՛ր, կապի՛ր, կարի՛ր, կտրի՛ր, նայի՛ր, նստի՛ր, պահի՛ր, պատմի՛ր, վազի՛ր, սիրի՛ր, փակի՛ր, փոխի՛ր, քամի՛ր...

642. Ե խոնարհման *ածանցավոր բայերի հրամայական եղանակի կազմությունը եզակի թվում՝*

*ա) արմատական հիմքով* (ա՛նց, լե՛լ...)

*բ) արմատական հիմքով և* իր (ի, իյ) *վերջավորությամբ* (անցի՛ր, անցի՛, լելի՛ր, ի՛լի)

*գ) արմատական հիմքով* և է (ա) *վերջավորությամբ* (ա՛նցա, ի՛լէ)

անցի՛ր, գտի՛ր, ելի՛ր, զարկի՛ր, իջի՛ր, հասի՛ր, մտի՛ր, հա՛գի՛ր, պագի՛ր, (=համբուրի՛ր)...

643. Ե *խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի կազմությունը հոգնակի թվում՝*

*ա) անցյալի ցոյական հիմքով* (սիրէցե՛ք, լսէցէ՛ք)

*բ) ներկայի հիմքով* (սի՛րէք, լսէ՛ք)

բաժանեցե՛ք, բռնեցե՛ք, զգեցե՛ք, գրեցե՛ք, եփեցե՛ք, լսեցե՛ք, խմեցե՛ք, ծակեցե՛ք, կտրեցե՛ք, հանեցե՛ք, մաղեցե՛ք, պատմեցե՛ք, չափեցե՛ք, սիրեցե՛ք, փակեցե՛ք...

644. Ա *խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի կազմությունը եզակի թվում՝*

*ա) ներկայի հիմքով և* ա (օ, ու) *վերջավորությամբ* (մնա՛, մնօ՛, մնո՛ւ)

*բ) անցյալի ցոյական հիմքով* (մնա՛ց)

*գ) անցյալի ցոյական հիմքով և* իր (ի) *վերջավորությամբ* (մնացի՛ր, մնացի՛)

աղա՛, խաղա՛, մնա՛, երևա՛, խնդա՛, կարդա՛, հազա՛, հավատա՛...

645. *Ա խոնարհման ածանցավոր բայերի հրամայական եղանակի կազմությունը եզակի թվում՝*

*ա) անցյալի ցոյական հիմքով* (մօռա՛ց, իմա՛ց)

*բ) անցյալի ցոյական հիմքով և* իր (ի, իյ) *վերջավորությամբ* (մոռացի՛ր, մոռացի՛, իմացի՛)

**դիմացի՛ր, բարձրացի՛ր, իմացի՛ր, լվա՛, հասկացի՛ր, մեծացի՛ր, մոտեցի՛ր, մոռացի՛ր, ուրախացի՛ր...**

646. *Ա խոնարհման ածանցավոր բայերի հրամայական եղանակի կազմությունը հոգնակի թվում՝*

*ա) անցյալի ցոյական հիմքով* (մոռացե՛ք, մոռցե՛ք)

*բ) ներկայի հիմքով* (մըռընէ՛ցեք, մոռա՛նեք)

**բարձրացե՛ք, իմացե՛ք, լվացե՛ք, հասկացե՛ք, մեծացե՛ք, մոտեցե՛ք, մոռացե՛ք, ուրախացե՛ք...**

647. Գալ *բայի հրամայականի կազմությունը՝*

*ա)* եկ *հիմքից* (ե՛կ, էգո՛ւ, էգօ՛, էգո՛ւր—յեկէ՛ք, էգէ՛ք)

*բ)* ար *հիմքից* (ա՛րի, ար՛, յա՛ր—արի՛ք արէ՛ք, արիցէ՛ք)

**ե՛կ, եկե՛ք**

648. *Պատճառական բայերի անորոշի հիմքի կազմությունը՝*

*ա)* ցուն (ցն) *ածանցով* (հասցունել, հասցնել)

*բ)* -ուց *ածանցով* (հասուցել)

*գ)* -ցուց (ցց) *ածանցով* (խասցուցել)

*դ)* -ցր *ածանցով* (հասցրիլ)

**զարմացնել, իջեցնել, լացացնել, լողացնել, թռցնել, խոսեցնել, հագցնել, հասկացնել, ճասցնել, հեռացնել, մտցնել, փախցնել, քնեցնել...**

649. *Պատճառական բայերի ներկա ժամանակի դրսևորումը՝*

*ա)* ու *լծորդ ձայնավորով* (գը խաղցունում, գը խաղցունուս...)

*բ)* է (ի) լծորդ *ձայնավորով* (զը խաղցնէմ, զը խաղցնէս)

| | | |
|---|---|---|
| խմեցնում եմ | խմեցնում ենք | ճասկացնում ես |
| խմեցնում ես | խմեցնում եք | թոցնում եմ |
| խմեցնում է | խմեցնում են | ճազցնում է |
| զարմացնում եմ | զարմացնում ենք | ճեռացնում են |
| խոսեցնում եմ | խոսեցնում ենք | մոտեցնում եք |
| լողացնում եմ | լողացնում ենք | քնեցնում եմ |

**650.** *Պատճառական բայերի անցյալ կատարյալի կազմությունը՝*

*ա)* (ա)gր *ածանցավոր հիմքով* (խաղացրի, խաղցրի)

*բ)* (g)ուց *ածանցավոր հիմքով* (խաղցուցի, ճասուցի)

| | | | |
|---|---|---|---|
| լողացրի | լողացրինք | ճասկացրի | ճասկացրինք |
| լողացրիր | լողացրիք | ճասկացրիր | ճասկացրիք |
| լողացրեց | լողացրին | ճասկացրեց | ճասկացրին |
| խաղացրի | լացացրի | խմեցրի | փախցրի |
| խաղացրիր | լացացրիր | խմեցրիր | փախցրիր |

**651.** *Պատճառական բայերի եզակի հրամայականի կազմությունը՝*

*ա)* (g)gու *վերջավորությամբ* (խաղցո՛ւ, մոոցո՛ւ, խաղցըցո՛ւ...)

*բ)* -gուր (*-ր-ի հավելմամբ) վերջավորությամբ* (խաղցո՛ւր, մոոցուր)

*գ)* gրու (*ր-ի դրափոխությամբ) վերջավորությամբ* (խաղցրո՛ւ, մոոցրո՛ւ)

բարձրացրո՛ւ, խաղացրո՛ւ, խմեցրո՛ւ, կերցրո՛ւ, ճեռացրո՛ւ, ճիշեցրո՛ւ, մոտեցրո՛ւ, նստեցրո՛ւ, քնեցրո՛ւ...

**652.** *Սահմանական ներկայի ժխտական խոնարհման դրսևորումը՝*

*ա) անկատար դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով* (չեմ գրում, գրում չես, գրելիս չեմ, չեմ գրելի)

*բ) ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով* (չեմ գրեր, չեմ խոսիր, չեմ կարդա, չես կարդա...)

*գ) բայի դիմավոր ձևերի և օժանդակ բայի ժխտական ձևերի զուգակցմամբ* (չեմ խաղամ, չես խաղաս, չի խաղա)

| | | | |
|---|---|---|---|
| չեմ սիրում | չենք սիրում | չեմ լսում | չենք լսում |
| չես սիրում | չեք սիրում | չես գնում | չեք գնում |
| չի սիրում | չեն սիրում | չի մնում | չեն մնում |

## *653. Անցյալ կատարյալի պարզ ձևերի և ըղձականի ժխտական խոնարհման դրսևորումը՝*

*ա) հաստատական խոնարհման ձևերի և չ ժխտական մասնիկի նախադաս գործածությամբ* (չըգրեցի, չըգրեցիր, չըգրեմ, չըգրես)

*բ) հաստատական խոնարհման և ոչ ժխտական բառ-մասնիկի ետադաս գործածությամբ* (գրեցի ոչ, գրեցիր ոչ, գրեմ ոչ, գրես ոչ...)

| | | | |
|---|---|---|---|
| չգրեցի | չգրեցինք | չմնացի | չմնացինք |
| չգրեցիր | չգրեցիք | չմնացիր | չմնացիք |
| չգրեց | չգրեցին | չմնաց | չմնացին |

| | | | |
|---|---|---|---|
| չխմեմ | չխմենք | չխմեի | չխմեինք |
| չխմես | չխմեք | չխմեիր | չխմեիք |
| չխմի | չխմեն | չխմեր | չխմեին |

## *654. Պայմանական ապառնիի ժխտական խոնարհման դրսևորումը՝*

*ա) անորոշ դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով* (գրել չէմ, մնալ չէմ)

*բ) ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով* (գիրի չիմ, մնա չիմ, չեմ գրեր, չես մրնար)

*գ) ըղձականի և օժանդակ բայի ժխտական ձևերով* (չեմ գըրիմ, չես գըրիս... չեմ մընամ, չես մընաս...)

| | | | |
|---|---|---|---|
| չեմ գրի | չենք գրի | չեմ մնա | չենք մնա |
| չես գրի | չեք գրի | չես մնա | չեք մնա |
| չի գրի | չեն գրի | չի մնա | չեն մնա |

**655.** *Հարկադրական եղանակի ժխտական խոնարհման ձևերում չ (ոչ) մասնիկի տեղը՝*

*ա) զուգակցված եղանակիչին* (չպիտի գրեմ, գրիլ չտեմ)

*բ) զուգակցված բայաձևին* (պիտի չգրեմ, տի չըգրեմ)

*գ) անկախ գործածությամբ* (պետմա գրիմ ուչ)

| | | | |
|---|---|---|---|
| չպիտի գրեմ | չպիտի գրենք | չպիտի գրեի | չպիտի գրեինք |
| չպիտի գրես | չպիտի գրեք | չպիտի գրեիր | չպիտի գրեիք |
| չպիտի գրի | չպիտի գրեն | չպիտի գրեր | չպիտի գրեին |

| | |
|---|---|
| ես չպիտի ասեմ | մենք չպիտի ասենք |
| դու չպիտի ասես | դուք չպիտի ասեք |
| նա չպիտի ասի | նրանք չպիտի ասեն |

**656.** *Արգելական հրամայականի արտահայտությունը՝*

*ա)* մի՛ *արգելական մասնիկի նախադաս կիրառությամբ* (մի՛ խաղա, մի՛ խաղալ, մի՛ խաղար)

*բ)* մի՛ *արգելական մասնիկի ետադաս կիրառությամբ* (խաղալ մի՛, թակիլ մա՛ն...)

| | | |
|---|---|---|
| մի՛ խաղա | մի՛ խոսիր | մի՛ լա |
| մի՛ մնա | մի՛ գրիր | մի՛ տուր |
| մի՛ գնա | մի՛ ծխիր | մի՛ գա |
| մի՛ կարդա | մի՛ քաշիր | |

**657.** Մի-*ով կազմվող արգելականի հոգնակիի դրսևորումը.*

*ա) մասնիկի հոգնակիությամբ* (մի՛ք գրիլ, գիրիլ մա՛ք, կիրիլ մէ՛ք)

*բ) բայաձևի հոգնակիությամբ* (մի՛ գրեք, մի՛ խաղաք)

**մի՛ խաղաք, մի՛ մնաք, մի՛ գնաք, մի՛ բռնեք, մի՛ գրեք, մի՛ խոսեք, մի՛ ծխեք, մի՛ կարդաք...**

*658.* **Ե** *խոնարհման բայերի կրավորական սեռի դրսևորումը՝*

*1. կրավորական* վ *ածանցով* (ազատվել, ազատված, ազատվեցի)

*2. կրավորաձև խոնարհմամբ՝*

*ա) անորոշի հիմքից կազմվող ձևերում՝* ի *լծորդ ձայնավորով* (ազատիլ, ազատիմ, կազատիմ... պիտի ազատիմ)

*բ) անցյալ կատարյալում՝ կրավորաձև վերջավորություններով* (ազատեցա, ազատեցար, ազատեցավ...)

*3. և՛* վ*-ով, և՛ կրավորաձև խոնարհմամբ* (ազատվեցա, ազատվեցավ)

| | | | |
|---|---|---|---|
| **բռնվում եմ** | **ազատվում եմ** | **կբռնվեմ** | **կբռնվենք** |
| **բռնվում ես** | **ազատվում ես** | **կբռնվես** | **կբռնվեք** |
| **բռնվում է** | **ազատվում է** | **կբռնվի** | **կբռնվեն** |

| | | | |
|---|---|---|---|
| **բռնվեցի** | **բռնվեցինք** | **ազատվեցի** | **ազատվեցինք** |
| **բռնվեցիր** | **բռնվեցիք** | **ազատվեցիր** | **ազատվեցիք** |
| **բռնվեց** | **բռնվեցին** | **ազատվեց** | **ազատվեցին** |

**կարգվեցի** *«ամուսնացա»*, **կտրվեց** *(պարանը)*

*659. Սոսկածանցավոր բայերի դիմաց անածանց բայեր.*

*ա) չ սոսկածանցի բացակայությամբ* (թռչել—թռել)

*բ)* (ա, է)ն *սոսկածանցի բացակայությամբ* (ելնել—ելել)

**դիպչել, թռչել, կպչել, կորչել, ուռչել, փախչել...**

**անել (<առնել), առնել (<առնուլ), բուսանել, դառնալ...**

**դնել (<*դիրնել), ելնել, մեռնել, մտնել, վախենալ...**

*660.* **Չ** *սոսկածանցի դիմաց* ն *սոսկածանց* (փախչել—փախնել, դիպչել—դիպնել)

**դիպչել, թռչել, խրտչել, կորչել, կպչել, ուռչել, սառչել, փախչել...**

*661. Պարզ բայի դիմացածանցավոր բայ* (երևալ—էրէվնալ, պառավել—պառվընալ)

ամաչել, գիտել, երդվել, երևալ, թողուլ, իշխել, կանաչել, կարել *(կարենալ)*, կարոտել, ճավատալ, ճանաչել, պառավել...

*622. Պարզ բայի դիմաց հարադիր բայ (բանալ—բաց անել, պարել—պար գալ)*

աղօթել, ամաչել, անցնել, բանալ, եռալ, երդվել, զրուցել, թաթախել, թիկնել, թողնել, խաղալ, խաչակնքել, կախել, ճարցնել, պարել, ձայնել, վազել, վնասել, ցավել, ցրել, փըլվել, քնել...

*663. Անորոշ հոդի՝*

*ա) նախադաս գործածություն* (մի մարդ, մին մարթ, մէ մարթ)

*բ) ետադաս գործածություն* (մարթ մի, մարթըմ...)

Մի մարդ ու մի կին են լինում: Մի օր այս մարդը հիվանդանում է:

*664. Որոշյալության արտահայտությունը՝*

*ա) ն և ը (է ա) հոդերով* (լեզու—լեզուն, ծառ—ծառը, ծառա)

*բ) միայն ն հոդով* (լեզուն, ծառըն)

*գ) հերթագայությամբ (ծառ*>ձուռ—ձառռ)

Ծառը ծաղկեց: Լեզուն երկար է: Կովն էր ծնել: Կանը հին քաղաք է: Պառը, տունը ավերվեց: Նրա այծը սատկեց: Հարսը վազեց դեպի տուն: Երեխան ամանը ջարդեց:

*665. Հատկացուցիչի և հատկացյալի համաձայնությունը՝*

*ա) որոշյալ հատկացյալի հետ որոշյալ հատկացուցիչ* (ծառին տերևը, ծառէն տիրիվը, Գրիգորին հարը)

*բ) որոշյալ հատկացյալի հետ անորոշ հատկացուցիչ* (ծառի տերևը, Գրիգորի հէրը)

ծառի տերև, ծառի տերևը. գետի ջուր, գետի ջուրը. արտի խոտ, արտի խոտը. ձիու պոչ, ձիու պոչը. ոչխարի դմակ, ոչխարի դմակը. աղջկա մազեր, աղջկա մազերը. Սարգսի տղա, Սարգսի տղան. պառավի ոլեր, պառավի ոլերը.

*666. Չայնավորահանգ բառերի որոշյալության դրսևորումը՝*

*ա) ն որոշիչ հոդով* (ձին սատկեց)

*բ) նը կրկնակ որոշիչ հոդով* (ձինը խաղաց)

Ձին սատկեց: Կատուն մուկ բռնեց: Կարոն տուն եկավ: Գաբան վառվել է: Գուլպան ծակվել է: Խնամին գնացել է գյուղ: Քեռին խոտ է ճնձում:

*667. Նախադասության ենթակայի և ուղիղ խնդրի՝*

*ա) կայուն շարադասություն* (Գրիգորը կսիրե Արշակը)

*բ) ազատ շարադասություն* (Գրիգորը սիրում է Արշակին, Արշակին է սիրում Գրիգորը, Գրիգորը կսիրե զԱրշակ):

Գրիգորը սիրում է Արշակին: Արշակին է սիրում Գրիգորը: Գրիգորը Արշակին սիրում է: Արշակին Գրիգորն է սիրում:

*668. Ուղղական, սեռական, տրական, հայցական հոլովներում հատուկ անձնանունների անհոդ կիրառություններ* (Արշակ ճէցալա Ըրէվան: Արշակա ձին սատկած ա: Սմբոթը տըվալ ըմ Արշակա: Գարեգին Արշակա մին սօրուն թակալ ա):

Արշակը գնաց Երևան: Արշակի ձին սատկել է: Կողովը տվի Արշակին: Գարեգինը Արշակին մի լավ ծեծեց:

*669. Բացառական, գործիական և ներգոյական հոլովներում* ը(ն) *որոշյալ հոդի առկայություն* (fարիցը, ճամփովը, գետումը)

Քարից ընկավ՝ սատկեց: Ճանապարհով մի մարդ էր անց-նում: Զմեռը լողանում էր գետում:

*670. Ստացական հոդերից հետո հավելական ի ձայնավոր* (բերանս—բերանսի, բերանդ—բերանդի)
Ձեռքդ, երեսդ, գլուխս, մայրս, մայրդ, եղբայրդ...

*671. Ցուցական հոդի անկայունություն* (գիշերս, էս գիշերս)
Այս գիշեր շատ անձրև եկավ: Այս ծառը փտած է: Այս առա-վոտ շատ ցուրտ էր...

*672. Ուղիղ խնդրի դրսևորումը անձի անուններում՝*
*ա) տրական հոլովով (սիրել՝* աղջկան)
*բ) ուղղական հոլովով (սիրել՝* աղջիկ(ը))
*գ) նախդիրով հայցականով (սիրել՝* զաղջիկը)
Սիրել աղջկան, տանել հարսին, ծեծել երեխային:

*673. Ուղիղ խնդրի դրսևորումը իրի անուններում՝*
*ա) ուղղականով* (ես տուն եմ շինում)
*բ) նախդիրով հայցականով* (զը շինեմ բզտուն)
Հակոբը տուն է շինում: Մինասը քար է տաշում, հող է բե-րում: Ցեխ տուր վարպետին: Իմ տունն է քանդում: Գերեզմա-նի քարն է տաշում: Հողը լցրու պատի տակ:

*674. Ուղիղ խնդրի փոխարեն* զը *մասնիկի գործածություն* (հայ ուդիմ զը *«ուտում եմ այդ բանը»* դիսօ զը *«տեսա նրան»)*
Ապուրը համեղ է, ուտում եմ այն: Տեսա նրան:

*675. Դիմորոշ հոդի գործածություն բայի հետ՝ խնդրի փոխա-րեն* (կըտանեմըտ—*քեզ կտանեմ,* կասեմըտ—*կասեմ քեզ)*

կսովորեցնեմ քեզ, կտանեմ քեզ, կասեմ քեզ, կծեծեմ քեզ, կտամ քեզ:

*676. Նպատակի պարագայի արտահայտությունը՝*

*ա) անորոշ դերբայի ուղիղ ձևով* (գնացինք մոշ քաղել)

*բ) անորոշ դերբայի տրական հոլովով* (գնացինք մոշ քաղելու)

*գ) ենթակայական դերբայով* (գնացինք մոշ քաղող)

Գնացին մոշ քաղելու: Գնաց արտը ջրելու: Եկավ հաց ուտելու: Եկան աղջիկ ուզելու:

*677. Տեղի պարագայի դրսևորումը՝*

*ա) հայցական հոլովով* (աշխատել գեղը)

*բ) տրական հոլովով* (աշխատել գեղին)

*գ) ներգոյական հոլովով* (աշխատել գեղըմը)

*դ) նախդիրով տրականով կամ հայցականով* (աշխատել ի գեղ, ի տան)

*ե) կապերի միջոցով* (դաշտի մեջ, տաշտ ինի)

Աշխատում է այգում: Հավաքվել են դաշտում: Ապրում է գյուղում: Ամանում ջուր կա: Տաշտում հաց չկա:

*678. Անկատար դերբայի երկրորդական ձևի (գրելիս, կարդալիս) պարագայական կիրառություն* (Ծիծաղելիս աչքերից արցունքներ էին թափվում):

Ծիծաղելիս ատամները երևում էին: Քայլելիս աչ ոտքից կաղում էր: Կարդալիս կակազում էր: Ուտելիս ձեռքերը դողում էին:

*679.* «Ունեմ» *և* «կամ» *բայերի հետ տրական հոլովով ենթակա* (Ինձ մի ձի ունեմ, ձի ախշիկըմ կա)

Դու քանի՞ ձի ունես (քեզ քանի՞ ձի ունես): Ես մի ձի ունեմ (ինձ մի ձի ունեմ): Գրիգորը մի տղա ունի:

680. *Հետ, մեջ, մոտ, վրա, առջև կապերի կիրառությունը՝*

*ա) նախադաս* (հէտ ախպօր, վըր հօրուն, մէչ այգուն)

*բ) ետադաս* (ախպոր հետ, հօրու վրա, այգու մեջ)

Քարի մոտ, եղբոր մոտ, հոր հետ, ընկերների հետ, ճանապարհի վրա, տանիքի վրա, տան առջև, գետի մեջ, ջրի մեջ...

## ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

681. *Շեշտանախորդ վանկերի ձայնավորների՝*

*ա) թուլացում (սղում կամ փոխարկում ը-ի՝* ամա̈չկոտ—ամչկօտ, հըմանչկուտ)

*բ) պահպանում* (ամաչկոտ—ամաչկօտ)

ամաչկոտ, աշխատել, աւելանալ, բամբասանք, երկայնանալ, թեթևանալ, ժողովել, հեռանալ, նեղանալ, ողողել, վախենալ...

682. *Եռավանկ բառերի ձայնավորների սղում կամ փոխարկում ը-ի՝*

*ա) միջնավանկում* (աղաջուր—ախչուր, կարկատան—կարկըտան)

*բ) առաջնավանկում* (աղաջուր—ըղաջուր, կարկատան—կըրկատան)

աղաջուր, առաջնակ, աւելել, աւելուկ, բուսանել, գողանալ, զարմանալ, զարկանել, թաքախել, լոգանալ, կարկատան, ճախարակ, սովորել, վայելել...

683. *Շեշտի տակ գտնվող ա-ի դիմաց՝*

*ա) շրթնայնացած ա ձայնավոր* (մարդ—մ̊արթ)

*բ) o ձայնավոր* (մարդ—մօրթ)

*գ) ու ձայնավոր* (մարդ—մուրթ)

*դ) ո(ö) երկբարբառ* (մարդ—մոըթ)

ահ, աղ, աչ, ափ, թաթ, թամբ, թանկ, թաս, թաց, լաց, խալ,

ծափ, կաղ, մազ, մաղ, մարդ, նազ, չափ, պարտք, սալ, սար, վախ, տանձ, ցախ...

*684. Նախաշեշտ դիրքի ա-ի դիմաց՝*

*ա) ա̈ ձայնավոր* (ասեղն—ա̈սիղ)

*բ) է ձայնավոր* (ասեղն—էսիէղ)

*գ) ...*

ածու, ամաչել, առակ, ասեղն, արօս, բարախ, լակել, ծամել, ծարաւ, կակուղ, կապել, պարան, ցանել, փակել, քացախ...

*685. Հին հայերենի* բ, գ, դ, ձ, ջ-*ից կամ դրանցից առաջացած խուլերից հետո գտնվող* ա-*ի դիմաց (ըստ «Աճառյանի օրենքի»)՝*

*ա)* ա̈ ձայնավոր (բաց—բա̈ց, պա̈ց)

*բ) է ձայնավոր* (բաց—բէց, պէց)

բան, բամբակ, բան, բանջար, բառնալ, բարակ, բարձ, բաց, գազան, գանգատ, գառուն, դաս, դատ, դանակ, դատարկ, դարման, ձագ, ձախ, ջարդել, ջաղաց *(<ջրաղաց)*...

*686.* Մ, Ն *ռնգայիններից առաջ գտնվող* ա-*ի դիմաց՝*

*ա) շրթնայնացած ա̊ ձայնավոր* (ամպ—ա̊մպ)

*բ) օ ձայնավոր* (ամպ—օմպ)

*գ) ու ձայնավոր* (ամպ—ումպ)

աման, ամիս, ամպ, ապրանք, առանց, բարեկենդան, զանգակ, զոքանչ, թան, թանձր, համար, մանգաղ, մանել, յեսան, նշան, սամի, սանդ, սեղան, տանջանք, ցամաք, քամել...

*687. Շշականների հարևանությամբ* ա-*ի դիմաց՝*

*ա) շեշտակիր դիրքում* ա̈ *ձայնավոր* (խաչ—խա̈չ)

*բ) նախաշեշտ դիրքում* ի *ձայնավոր* (խաչել—խիչիլ)

ժանգ, խաշ, կարճ, ճանճ, շարժ, չանչ, չար...
անել, աշել (աշֆել), աշուն, արժել, բաժին, խաշել, խարշել, ճաշուել, շարժել, պաշար, ֆարշել...

*688. Մի խումբ բառերում* ա-*ի հնչյունափոխության ընդհանուր օրինաչափությանը հակառակ՝* շրթնային օ-*ի կամ* ու-*ի առկայություն* (գալ—գոլ, գուլ, գ՛ո̈ւլ)
բարձր, գալ, գառն, գարի, ֆաղց, ֆաղցած, ֆաղցր:

*689. Միավանկ բառերի բառասկզբի* ո-*ի դիմաց՝*

*ա)* օ *ձայնավոր* (որ-օր)
*բ)* ու *ձայնավոր* (որ-ուր)
*գ)* ո̈ւ ձայնավոր (որ-ո̈ւր)
*դ)* ւո//վո *երկբարբառ* (որ-ւոր, վոր)
*ե)* վօ, վու, վէ, վըէ, վը *հնչյունակապակցություններ* (որ-վօր, վէր...)

ոխ, ոչ, ով (ո), որ, որբ, որդն, որձ, ոմն (ոֆ մին)...

*690. Երկվանկ բառերի բառասկզբի* ո-*ի* դիմաց՝

*ա)* օ *ձայնավոր* (ոջիլ-օչիլ)
*բ)* (ւո)վո *երկբարբառ* (ոջիլ-ւոչիլ, վոչիլ)
*գ)* ու *ձայնավոր* (ոջիլ-ուչիլ)
*դ)* ո̈ւ *ձայնավոր* (ոջիլ-ճո̈ւջո̈ւլ)
*ե)* վօ, վէ, վըէ, վը *հնչյունակապակցություններ* (ոջիլ—վօչիլ, վէչիլ...)

ոչխար, ոջիլ, ոջլոտ, ոռնալ, ոսկի, որդի, որդնել, որոճ, որսալ...

*691. Հին հայերենի* բ, գ, դ, ձ, ջ-*ից կամ դրանցից առաջացած խուլերից հետո գտնվող* ո-*ի դիմաց (ըստ «Աճառյանի օրենքի»)՝*

*ա)* ö *ձայնավոր* (գոգ-գ՛öք)

բ) ö երկբարբառ (գոգ—կյöք

բողկ, գոգ, գող, գոմ, գործ, դող, ձող, ձոր, ջոկ, ջոջ...

692. *Բառամիջի շեշտակիր* ո-*ի դիմաց՝*

*ա)* օ՝ *ձայնավոր* (խոտ—խօտ)

*բ)* ու (ո̈ւ) *ձայնավոր* (խոտ—խուտ, խո̈ւտ)

*գ)* ո *երկբարբառ* (խոտ—խոտ)

թոք, լող, խոզ, խոտ, ծոմ, կոթ, կող, կողմն, կոշտ, մոմ, նոր, չոր, պոչ, սոխ, փոս, փոր...

լակոտ, խաղող, խմոր, խնձոր, կլոր, մատնոց, շնորհավոր, շնորհք, ոջլոտ, պռոշ, սղոց, տորոն, քակոր...

անկողին, գոռալ, գովել, գործել, թողուլ, ժանգոտել, խոնարհ, կոխել, կորնգան, կորչել, փոշի...

693. *Նախաշեշտ դիրքում գտնվող* ո-*ի դիմաց՝*

ի *ձայնավոր* (թոնիր—թինէր)

բոկեղ, բորոտ, գոմէշ, թոնիր, խոշոր, կորեակ, կոփել, հոգալ, մոզի, մորի, սղոցել, ցորեան, փոխել, քորել...

694. *Վ-ից առաջ գտնվող* ո-*ի դիմաց* ա ((խորոված-խըրա-*ված)*

խորոված, խորովել, խռով, խռովել, ծով, կով, հով, սով...

*գործ. Հոլովում՝* գետ—գետով (—գէտավ), սար—սարով, կացին—կացնով, բահ—բահով, դանակ—դանակով, անտառ—անտառով...

695. *Հին հայերենի* բ, գ, դ, ձ, ջ-*ից կամ դրանցից առաջացած խուլերից հետո գտնվող* ու-*ի դիմաց (ըստ «Աճառյանի օրենքի»)՝* ո̈ւ *ձայնավոր* (բուրդ—բո̈ւրդ, պո̈ւրթ)

բուրդ, բուֆ, գուբ, գուբան, գունդ, գուշ, դու, դուռն, դուրս, ձու, ձուկն, ջուր...

696. Ծեշտակիր ու-ի դիմաց՝

*ա) օ ձայնավոր* (կուժ—կօժ, սուտ—սօտ)

*բ)* էու (աու, ըու) *երկբարբառ* (կուժ—գէուժ, կաուժ, սուտ—սէուդ, սաուդ)

*գ)* օու (öü) *երկբարբառ* (կուժ—կօուժ, գյöüժ, սուտ—սօուտ, սօուդ)

թուխ, թուխս, թումբ, թունդ, թուշ, թուր, թուփ, թուֆ, խուլ, խունկ, ծուռ, կուզ, կուժ, ութ, ուղտ, ունջ, ուրց, սուզ, սունկ, սուտ, սուր, սուրբ, տուն, փուշ, փուֆս, ֆուն...

ութսուն, ունեմ, ուտել, ուրիշ...

*697. Ու+ձայնավոր կապակցությունների դիմաց՝*

*ա)* ըվ+ձայնավոր (լուանալ—լըվանալ, վըլանալ)

*բ)* ուվ, üվ, ու+ձայնավոր (լուանալ—լուվանիլ, լüվանիլ)

աղուէս, բուրուառ, դժուար, զզուիլ, լուանալ, լուացք, հաշուել, շուարիլ, շուան...

տվել (<*տուեալ*), տված (<*տուած*), տվեց (<*տուեց*)...

*698. Միավանկ բառերում բառասկզբի ե-ի դիմաց՝*

*ա)* է *ձայնավոր* (եզն—էզ)

*բ)* ի *ձայնավոր* (եզն—իզ, իզնը)

*գ)* յե *եռաբարբառ* (եզն—յեզ)

*դ)* յէ *հնչյունակապակցություն* (եզն—յէզ, յէզը)

եզն, եկ, եռ, ես, երբ, երգ, երդ, եփ...

*699. Երկվանկ բառերի բառասկզբի ե-ի դիմաց՝*

*ա)* է *ձայնավոր* (ելանել—էլնել, էլնալ)

*բ)* ի *ձայնավոր* (ելանել—իլլիլ)

գ) յե եռաբարբառ (ելանել—յելնել)
դ) յէ հնչյունակապակցություն (ելանել—յէլնել)

ելանել, եղնիկ, եռակ, եռես, եռեք, եռևալ (եռևիմ), երկաթ, երկայն, երկանք, երկինք, երկիր, երկու, եփել...

700. Բառամիջի շեշտակիր է-ի դիմաց՝
ա) է ձայնավոր (թել—թէլ)
բ) ի ձայնավոր (թել—թիլ)
գ) ե երկբարբառ (թել—թել)

դեւ, թել, թեւ, թեփ, խելք, ծեծ, ճեշտ, ձեւ, մեղր, յետ, նեղ, չէչ, սեր, վեց, տեղ, ցեց...

աներ, ասեղն, արեւ, աւել, աւեր, կապերտ, ձուածեղ, տաշեղ...

աւելի, աւելորդ, դեղել, զենուլ, թերթեւ, լեզու, լեղի, ծեծել, կեռիք, շերեփ, տերեւ, փեսայ, փետուր...

701. Ր-ից առաջ գտնվող բառասկզբի ե-ի դիմաց՝
ի ձայնավոր (երեք—իրէք, իրիք)

երեկոյ, երես, երևիլ, (երևալ), երեք, երէկ, երէց, երիկամն, երինջ, երիցակին, երկու...

702. Մի շարք բառերում ր և ղ ձայնորդներից առաջ գրական լեզուների բառասկզբի ե-ի դիմաց ա ձայնավոր (եղբայր—աղբայր—ախպար)

եղբայր, եղին (եղինջ), եռազ, եռաշտ, եռեսուն, երկաթ, երկան(ք), երկու, եղջիւր:

703. Ռ ձայնորդից առաջ գտնվող ե-ի դիմաց՝
ա) ետին շարքի ա ձայնավոր (բեռն—բառ, պառ, փառ)
բ) առաջնային շարքի ա̈ ձայնավոր (բեռն—բա̈ռ, պա̈ռ)

բեռն, եռ, թեռ «թել», լիսեռն, կեռ, կշեռf, կշեռել, ճեռի, ձեռն, ձմեռն, մեռնել, (մեռանիլ), մեռոն, սիսեռն, fեռի...

704. *Մի շարք բառերում հին հայերենի է-ի դիմաց* ա *կամ* ա̈. *երբեմն նաև զուգահեռաբար* այ (տէր>տար, տա̈ր, տայր)

ամէն, առնէտ, թէ, էզ, խլէզ, մէջ, մէջf, պանէզ, պէտf, տէր, Մարգարէ:

705. *Շեշտակիր* ի-*ի դիմաց՝*

*ա)* է, ըէ, էյ *ձայնավոր* (միս—մէս, մէʲս, մըᵉս)

*բ)* ա, ա̈, *ձայնավոր* (միս—մաս, մա̈ս)

*գ)* էի, աի *երկբարբառ* (մէիս, մաիս)

*դ)* այ *երկհնչյուն* (միս—մայս)

թի, թրիf, լի(f), ծիծ, ծիտ, կիր, կծիկ, կին (կնիկ), ճինզ, մթին, միս, միտf, պինդ, պիրկ, սիրտ, վիզ, տիզ, տիկ, ցից...

706. *Բառավերջի բաց վանկի* ի-*ի դիմաց՝*

*ա)* է *ձայնավոր* (խնամի—խընամէ)

*բ)* ա, ա̈ *ձայնավոր* (խնամի—խընամա, խընամա̈)

գարի, եկեղեցի, խնոցի, խնամի, կաշի, կօրի, ճեռի, մատանի, մորթի, ջորի, տարի, fանի, fենի, fեռի...

707. *Ձայնավորների ներդաշնակությամբ գաղտնավանկի լիաձայնություն* (թթու-թութու)

բլիթ, զրոյց, թթու, կծու, կկու, կնուն, կնունf, կտուր, կտուց, ձուկն, մուկն, շլնի(շլինf), պտուկ, պտուղ, սունկ(ն), փշուր...

*708. Բառասկզբի ձայնավորի անկում* ղ, ր(ռ) *ձայնորդներից առաջ* (ուղեղ—ղօղ, երեխայ—ռախէ)

աղանձ (ղանձուտ), աղանձել, աղաչանք, աղօթել, արեգակն, առաւօտ, երախայ, երանեակ, ուղարկել, ուղեղ, ուղղորդ...

*709. Հին հայերենի շեշտակիր* այ *երկբարբառի դիմաց՝*

*ա)* ա *ձայնավոր* (այծ—ած)

*բ)* ա̈ *ձայնավոր* (այծ—ա̈ծ)

*գ)* է *ձայնավոր* (այծ—էծ)

այդ, այլ, այծ, այն, այս, այր «քարայր», գայլ, լայն, ծայր, կայծ, հայր, ձայն, մայր, սայլ, տայգր, փայտ...

*710. Հին հայերենի շեշտանախորդ* այ-*ի դիմաց՝*

*ա)* ա, ա̈ *ձայնավոր* (կայծակ—կածակ, գ̇ա̈ձագ)

*բ)* է *ձայնավոր* (կայծակ—կէծակ) .

*գ)* ի *ձայնավոր* (կայծակ—կիծօկ)

այգուց (էգուց), այսօր, այրի, այրիկ, այրել, խայթել, կայծակ, կայռիք, ձայնել, պայծառ, վայթել, վայրի, փայծաղն, քայլել...

*711. Բառավերջի* այ-*ի դիմաց՝*

*ա)* ա *ձայնավոր* (փեսայ—փեսա)

*բ)* ի *ձայնավոր* (փեսայ—փըէսի)

*գ)* ու *ձայնավոր* (փեսայ—փիսու)

ակռայ, բակլայ, երախայ ծառայ, կապայ, կասկարայ, սատանայ, տղայ, փեսայ...

*712. Հին հայերենի բառասկզբի* աւ *երկբարբառի դիմաց՝*

*ա)* ու, ո̈ւ *ձայնավոր* (աւծել—ուծիլ, ո̈ւձիլ)

*բ)* վօ *երկհնչյուն* (աւծել—վօծընիլ)

աւծել, աւտար, աւրէնք, աւրինակ, աւրհնել...

*713. Հին հայերենի շեշտակիր* աւ-*ի դիմաց՝*

*ա)* ու *ձայնավոր* (աւր—ուր)

*բ)* ո(վո) *երկբարբառ* (աւր—վոր)

**օր, օձ, օր, մօտ, եօթն, տօն,**
**արօր, ակօս, խելօք, արօս, աղօթք...**

*714. Մի խումբ բառերում հին հայերենի* աւ *երկբարբառի դիմաց* օխ *հնչյունախումբ* (եաւթն—օխտը, յօխտը)

**եաւթն, եաւթանասուն, աւձ, աւտար (—օխտար), աւրհնել (—օխնել)**

*715. Հին հայերենի* ոյ *երկբարբառի դիմաց՝*

*ա)* ու *ձայնավոր* (քոյր—քուր)

*բ)* ո̈ւ *ձայնավոր* (քոյր—քյո̈ւր)

*գ)* օ *ձայնավոր* (քոյր—քօ̣ր)

*դ)* ո *երկբարբառ* (քոյր—քոր)

*ե)* ի *ձայնավոր* (քոյր—քիր)

*զ)* այ *երկհնչյուն* (լոյս—լայս)

*է)* ուայ, ուօյ *եռաբարբառ* (քոյր—քուայր, քուօյր)

**անոյշ, բոյթ, բոյն, բոյս, գոյն, զոյգ, զրոյց, թոյլ, ընկոյզ, լոյս, ծոյլ, կապոյտ, կոյր, հանգոյց, շոյտ, ողկոյզ, ոյժ, պատրոյգ, պատրոյս, պտոյտ, սովորոյթ, քոյր...**

*716. Հին հայերեն* եա *երկբարբառի դիմաց՝*

*ա)* ա *ձայնավոր* (ցորեան—ցորան, ծառեար—ծառար, զարմացեալ—զըրմացալ)

*հ)* ե *երկբարբառ* (ցորեան—ցորեն, ծառեար—ծառեր, զարմացեալ—զարմացել)

*գ)* է *ձայնավոր* (ցորեան—ցորէն, ծառեար—ծառէր, զարմացեալ—զարմացէլ)

*դ)* ի *ձայնավոր* (ցորեան—ցորին, ծառեար—ծառիր, զարմացեալ—զարմացիր)

ատեան, բարեաւ, դայեակ, երանեակ, իրեար, լեառն, լեարդ, կորեակ, սեաւ, վառեակ, ցորեան.

*Հոգնակիի ձևեր*՝ արջեր, մազեր, ցավեր, քարեր, օձեր, օրեր.

*Բայական ձևեր*՝ սիրել եմ, բերել եմ, մոռացել եմ, զարմացել եմ, մնացել եմ, կարդացել եմ.

գրի՛ր (<*գրեա*), բռնի՛ր, խաշի՛ր, սիրի՛ր, ծեփի՛ր.

գրեց (<*գրեաց*), սիրեց, ծեփեց, եփեց, խաշեց.

*717. Հին հայերենի* իւ *երկբարբառի դիմաց*՝

*ա)* ու *ձայնավոր* (հարիւր—հարուր)

*բ)* ու̈ *ձայնավոր* (հարիւր—հա̈րու̈ր)

*գ)* ի *ձայնավոր* (հարիւր—հարիր)

*դ)* է *ձայնավոր* (հարիւր—հարէր)

ալիւր, աղբիւր, արիւն, բիւր, հարիւր, հիւսել...

*718.* Դիւր, ձիւն, ձիւթ, սիւն *բառերի* իւ-*ի դիմաց*՝

*ա)* ու, ու̈ *ձայնավոր* (ձիւն—ձուն, ծու̈ն)

*բ)* օ *ձայնավոր* (ձիւն—ձօն, ձօն)

*գ)* այ *երկհնչյուն* (ձիւն—ձայն, ծայն)

*դ)* ոյ *եռաբարբառ* (ձիւն—ծոյն)

դիւր, ձիւն, ձիւթ, սիւն

*719.* -ութիւն *ածանցի* իւ-*ի դիմաց*՝

*ա)* ու *ձայնավոր* (գողութիւն—գօղութուն)

*բ)* ի *ձայնավոր* (գողութիւն—գօղութին)

*գ)* է *ձայնավոր* (գողութիւն—գօղուտէն)

ալեւորութիւն, աջողութիւն, գողութիւն, եղբայրութիւն, երկայնութիւն, նեղութիւն, ուրախութիւն, չորութիւն, տէրութիւն...

720. *Ղ-ից առաջ գտնվող* եւ(իւ)-*ի դիմաց՝*

*ա)* է *ձայնավոր* (գեւղ—գէղ, կէղ)

*բ)* ե *երկբարբառ* (գեւղ—գեղ, կեղ)

գեւղ, գեւղացի, եւղ, երկեւղ, զամբեւղ, ճեւղ...

721. *Բառասկզբի* բ, գ, դ, ձ, ջ-*ի* դիմաց՝

*ա)* բ, գ, դ, ձ, ջ *ձայնեղ հնչյուններ* (բերել, գինի, դեղին, ձի, ջուր)

*բ)* բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ *շնչեղ ձայնեղներ* (բ՛երել, գ՛ինի, դ՛եղին, ձ՛ի, ջ՛ուր)

*գ)* պ, կ, տ, ծ, ճ *խուլ հնչյուններ* (պերել, կինի, տեղին, ծի, ճուր)

*դ)* փ, f, թ, ց, չ *շնչեղ-խուլ հնչյուններ* (փերել, fինի, թեղին, ցի, չուր)

բազուկ, բակ, բանալ, բարեկամ, բարի, բերան, բերել, բիր, բոլոր, բոկիկ, բրինձ...

գանգատիլ, գդակ, գեղեցիկ, գինձ, գիր, գիրկ, գլորել, գնալ, գոգնոց, գուլպայ, գրել, գրկել, գինի...

դալ, դալար, դառնալ, դատել, դդում, դեղին, դեղնուց, դիզել, դիմանալ, դմակ, դնել, դողալ, դրացի...

ձագար, ձգել, ձեւել, ձի, ձմերուկ, ձող, ձոր...

ջախջախել, ջերմ, ջիղ, ջնջել, ջոկ, ջոկել, ջորի, ջուր...

722. *Միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող* բ, գ, դ, ձ, ջ-*ի դիմաց՝*

*ա) ձայնեղ* բ, գ, դ, ձ, ջ *հնչյուններ* (խաբել—խա̈բիլ, ուրագ—նöրա̈գ/)

*բ) շնչեղ ձայնեղ* բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ *հնչյուններ* (խաբել—խաբե՛լ, ուրագ—ուրագ՛)

*գ) խուլ* պ, կ, տ, ծ, ճ *հնչյուններ* (խաբել—խապել, ուրագ—ուրակ)

*դ) շնչեղ խուլ* փ, f, թ, ց, չ *հնչյուններ* (խաբել—խափել, ուրագ—ուրաf)

ագանիլ (ճագնել), բադ, գոգ, դադար, էգ, թագ, թագաւոր,

խաբել, ծագ, ծագել, ճաշել, մարագ, մէջ, ոջիլ, ուրագ, պագ, պագանել, օգուտ, օձ, օձիք...

*723. Ր-ից հետո գտնվող հին* բ, գ, դ, ձ, ջ*-ի դիմաց՝*

*ա) ձայնեղ* բ, գ, դ, ձ, ջ *հնչյուններ* (մարդ—մարդ)

*բ) շնչեղ ձայնեղ* բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ *հնչյուններ* (մարդ—մարդ՛)

*գ) խուլ* պ, կ, տ, ծ, ճ *հնչյուններ* (մարդ—մարտ)

*դ) շնչեղ խուլ* փ, ք, թ, ց, չ *հնչյուններ* (մարդ—մարթ)

արջ, բարձ, բորբոս, բրդել, դարբին, դարձուցանել (դարձնել), երգ, զարդարանք, թրջել, լիրբ, լուրջ, կարգել, կարդալ, մրջիւն, շուրջառ, որբ, որդնել, որդի, որձ, ուրբաթ, սրբել, վարդ, փորձանք...

*724. Ղ>խ-ից հետո գտնվող* բ, գ, դ, ձ, ջ*-ի դիմաց՝*

*ա) խուլ* պ, կ, տ, ծ, ճ *հնչյունները* (աղբ—ախպ)

*բ) շնչեղ-խուլ* փ, (ք), թ, ց, չ *հնչյուններ* (աղբ—ախփ)

աղբ, աղբիւր, աղբիւրաջուր, աղջիկ, առողջ, դաղձն, դեղձ, եղբայր, եղբայրութիւն, խեղդել, մաղձ, շաղգամ, ողջ, շղջիկ...

*725. Բառասկզբի* պ, կ, տ, ծ, ճ*-ի դիմաց՝*

*ա) խուլ* պ, կ, տ, ծ, ճ *հնչյուններ* (պանիր, կատու, տանել, ծաղիկ, ճակատ)

*բ) ձայնեղ* բ, գ, դ, ձ, ջ *հնչյուններ* (բանիր, գադու, դանիլ, ձաղիգ, ջագադ)

*գ) մերթ ձայնեղ* (բ, գ, դ, ձ, ջ), *մերթ խուլ* (պ, կ, տ, ծ, ճ)՝ *պայմանավորված հնչյունական շղթայում նրանց նախորդող հնչյունի բնույթով (խուլից հետո՝ խուլ, ձայնայինից հետո՝ ձայնեղ)* (քացի դուն, քնաց տուն)

պակաս, պաղ, պաղել, պաղատանք, պապ, պապանձիլ, պառաւ, պատճառ, պէս, պղինձ, պղտոր...

կազմել, կալ, կախել, կակղել, կանուխ, կատար, կար, կա-

ռաս, կարգ, կարել, կարենալ, կաւ, կաֆաւ, կծանել (կծել), կտակ, կտաւ, կրակ...

տախտակ, տանել, տաշել, տապակել, տարեկան, տաֆ, տաֆդեղ, տնկել...

ծալ, ծալել, ծաղիկ, ծաղկիլ, ծաղր, ծեփ, ծեփել, ծիրան, ծլել, ծծել, ծմակ, ծնանիլ (ծնել), ծոց, ծուխ, ծռել...

ճակատ, ճաղ «միլ», ճանկ, ճաշ, ճար, ճերմակ, ճիպոտ, ճուտ, ճրագ, ճօճ(ֆ)... գնացի տուն, գնաց տուն. կա չըկա, մի բան կա. չորս կոճակ, երկու կոճակ. ճինգ տարեկան, վեց տարեկան...

726. *Բառամիջի միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքերում գտնվող* պ, կ, տ, ծ, ճ-*ի դիմաց՝*

*ա) խուլ* պ, կ, տ, ծ, ճ *հնչյուններ* (ապուր, ակիշ, գատիկ, ծիծաղ, մաճ)

*բ) ձայնեղ* բ, գ, դ, ձ, ջ *հնչյուններ* (աբուր, ագիշ, գադիգ, ձիձաղ, մաջ)

ապուր, դեպի, շապիկ, կապ, կոպ...

ակիշ, ծակել, կոկել, թակ, ծակ, կոկ, մանուշակ, ճամակ, շալակ, տակ, ֆամակ...

ազատել, զատել, կատու, կոտոշ, մատակ, շիտակ, պատառ, զատ, կարկուտ, կորկոտ, կուտ, ճաւատ, պատ, վատ, փշատ...

անիծել, լուծ, խամիծ, ծիծաղ, ծիծաղել, կասկած, մոծակ, ցած, ֆած...

լաճ, լիճ, կարիճ, կոճ, կոճակ, մաճ, որոճալ...

727. *Խուլ շփականներից հետո գտնվող* պ, կ, տ, ծ, ճ-*ի դիմաց՝*

*ա) խուլ* պ, կ, տ, ծ, ճ *հնչյուններ* (կուշտ—գուշտ)

*բ) ձայնեղ* բ գ, դ, ձ, ջ *հնչյուններ* (կուշտ—գուշդ)

ապսպաrել, ապrուստ, աստառ, աստղ, աստուած, աստուա-ծածին, բախտ, բախտաւոr, իսկի, կուշտ, ĥասկ, ĥասկա-ĥալ, նստիլ, ոսկի, ոսկr, ոսպն, վաստակ, վաստակիլ, տաշտ...

728. *Շնչեղների և* ս, *շ-ի հարևանությամբ խուլ* պ, տ, կ(ծ) ճ-*ի դիմաց համապատասխան շնչեղ խուլեր (առնմա-նական շնչեղ խլացում—*Կաշաղակ—fըչէղակ)

կաշաղակ, կթել, կշեռf, կշեռել, կշտանալ, պսակ, պսակել, փտել, frտինf, frտնել...

729. *Առաջնային շարքի ձայնավորներից առաջ* գ, կ, f-*ի դի-մաց* ջ, ճ, չ (գետին—ջետին, կեr—ճեr, fոյr—fիr—չիr)

գետին, գետ, գեrան, գեrանդի, գեrեզման, գինի, գին, կեանf *(կենք)*, կեr, կեrակուr, կէսօr, կիr, fեrել, fիթ, fիr *(<քույր)*

730. *Բաղաձայնից առաջ գտնվող* գ, կ, f-*ի դիմաց* ĥյ, յ (ճգ-նել—ճըĥյնէլ, թիկնել—թէĥյնէլ, աfլոr—աĥյլոr, այ-լոr)

ագանել (ĥագնել), ʼաfլոr, բակլայ, թիկնել, ճգնավոr, ճգնել, մգլել, մեկմեկ, մկrատ, մկrտել, չոrեfշաբթի, պագնել (պագանել), պակսել (պակասել), սեպտեմբեr>սեկտեմ-բեr, տաfնալ (տաfանալ), օգնել...

731. *Մի շարք բառերում հայերենի* գ-կ-*ի դիմաց՝*

*ա) կոկորդային կիսաշփական* η̂ (կանչել—η̂անչել)

*բ) ետնալեզվային շփական* խ (կանչել—խանչել)

գլուխ, գորտ, գտնել, ակռայ,
կանչել, կատաղել, կկու, կնեպ, կով տալ, կում, կչկչալ, կռունկ, կտրտել...

*732. Բառամիջի և բառավերջի* փ, ք, թ, ց, չ*-ի դիմաց* պ, կ, տ, ծ, ճ (ափ—ապ, կաթն—գատ, մեք—մեկ, խնոցի—խնոծի, փչել—փըճել)

եփել, աղաչել, թթու, լափել, խնոցի, խոփ, խփել, կաթն, կանեփ, կթել, մեք (մենք), մութ, մրափ, մրափել, շաբաթ, ութ, չափել, փեթ՛ակ, փչել...

*733. Շփականներից հետո գտնվող* թ, ք*-ի դիմաց ապաշնչեղացած* տ, կ (աշք—աշք—աշկ)

աշք, աղքատ, անէծք, դեղ(ք), դժոխք, թուղթ, խօսք, հրաշք, ճեղք, ճեղքել, մեղք, յաղթել, շարժ(ք)...

*734. Բառասկզբի* ք*-ի դիմաց քմային* ք՛ *ետին շարքի ձայնավորից առաջ* (քամել—ք՛ամել)

քակել, քակոր, քաղաք, քաղել քամել, քամի, քանդել, քանի, քար, քարշել, քնել, քշել, քսել...

*735. Բառավերջի* ք*-ի դիմաց* ս *(Աւետիք—Ավետիս, չորք—չօրս)*

Աւետիք, բաղանիք, բանալիք, երդիք, ընտանիք, ժանիք, կողպեք, հարսանիք, մօրուք, չորք, պահք, տանիք...

*736. Շչական* ջ, ճ, չ, ժ, շ*-ի դիմաց սուղական* ձ, ծ, ց, զ, ս *հնչյուններ՝ առանց դիրքի սահմանափակման* (ջուր—ձուր, ճերմակ—ծերմակ, ձերմակ, չափել—ցափել, շուն—սուն, ժամ—զամ)

աշուն, գէշ, գիշեր, ժամ, ժամանակ, ժիր, ինչ, իշխել, իջուցանել, (իջեցնել), խնչել, ճոթ, ճրագ, մաշել, մշակ, նշանել, նշխարք, շատ, շինել, շուն, շփել, չարչարել, չափել, ջարդել, փախչել, փչել...

*737. Բառամիջի նախաբաղաձայնական դիրքում՝ հին կիսաշփականների դիմաց ս, շ, զ, ժ շփական հնչյուններ* (լուացք—լըվասկ)

ածելի (ածլի), ամաչկոտ, անցանել (անցնել), աչք, արձակել, թնձկալ, իջանել (իջնել), իրիցակին, ինչքան, լուացք, խածանել, խծպել, խղճմտանք, խոցոտել, խցկել, ծածկել, կծկել, կճպել, կոծկել, կոճկել, ճեծանել (ճեծնել), մէջք, միջնակ, վարձք...

*738. Մի շարք բառերում առաջնալեզվային շփականների* (ժ, շ, զ, ս) *դիմաց կիսաշփական բաղաձայններ* (պատիժ—պատիճ, զզել—ցիձիլ, զկեռ—ցըքեռըր, քանզ—քանց)

ազոխ, զզել, երազ, զկեռ, ժողովել, խէժ, կարժ, մժեղ, պատիժ, պատժել, սողալ, վարժապետ, վարժվել, վարժատուն, քանզ....

*739. Զզ, զբ հնչյունակապակցությունների դիմաց (ը)սկ, (ը)սպ* (զգուշանալ— ըսկուշանալ, ազբ—ասպ)

ազբ, ազբել, ազգ, ազգական, անզգամ, զբաղիլ, զբոսնիլ, զգեստ, զգոյշ, զգուշանալ, Վազգէն...

*740. Բառասկզբի ճ-ի դիմաց* խ *(հազար—խազար)*

ճազ, ճազալ, ճազար, ճալել, ճամ, ճայ, ճայելի, ճայիլ, ճան-

գիտ, հանել, հաշիվ, հաչել, հաստանել (հասնել), հասկ, հաստ, հաստատ, հատ, հատանել (հատնել), հարցանել (հարցնել), հաց, հաւ, հին, հինգ, հինել, հիւանդ, հում, հունձ...

*741. Բառամիջի և բառավերջի* հ-*ի դիմաց՝*

*ա)* վ (հող—վըէղ, վէղ)

*բ)* ֆ (հող—ֆող)

հորթ (որթ), հոգի, հող, հոտ, հոտել, հոր, որս (հորս), հող, հոս, հոն...

*742. Բառամիջի և բառավերջի* հ-*ի դիմաց՝*

*ա)* յհ (մահ—մայհ)

*բ)* յ (մահ—մայ)

ագահ, գահ, գոհ, դահիճ, Թագուհի, Իսկուհի, մահ, շահ, պահել, (չահել), ռեհան, սահման, Տիրուհի...

*743. Բառասկզբի հին հայերենի* յ-*ի դիմաց՝*

*ա) ձայնեղ* հ՛ (յատակ-հ՛ատակ)

*բ) խուլ* հ (յատակ—հատակ)

*գ) զրո* (յ-*ի անկում՝* յատակ—ատակ)

յամել, յաչողիլ, յատակ, յիշատակ, յիշոց, յիսուն, յղի, յոպոպ, յուզել, յստակ, յստակել, յօնք, Յակոբ, Յովսեփ, Յարութիւն...

*744. Մի շարք բառերում ետնալեզվային ձայնեղ շփական* ղ-*ի դիմաց* լ (չիղ—հիլ)

պղօճ—բլոճ, եղած—էլած, լած//լէծ, եղել—լալ//էլէլ, լէլ, հողհոլիկ, չիղ—հիլ, ծիղ—ծիլ, տիղմ—տիլ, մղել—մլել.

745. *Բառասկզբի խ-ի դիմաց տարնմանական ն (խաղ—հաղ)*
խաղ, խաղալ, խաղաղ, խաղացուցանել (խաղացնել), խաղող, խեղդել, խեղճ...

746. Խ-ի *դիմաց ոչ տարնմանական* ն (խառնել—նառնիլ, ախոռ,—անուռ), գլուխ—գ̈ուն)
խառնել, խոր, խուրձն, խրատ, խրատել, խմեցուցանել, (խմեցնել), խլացուցանել (խլացնել), խռով, խռովել, ախոռ, ծախել, կոխել, ճախարակ, նախանձ, նախիր, քացախել, գլուխ, կախ, ձախ, մարախ, մուխ, տրեխ, փոխ...

747. *Ձայնորդ* ր-*ի դիմաց կիսաձայն* յ (ուրագ—ույօկ)
արտ, արօտ, աւերել, ծիրտ, ներիք, ներու, չարել, ուրագ, ուրախ, չար, չորանալ, սիրել, վարար, վերայ, ցերեկ, փորել, օրօրել, օրօրոց...

748. *Պայթական և կիսաշփական հնչյուններից առաջ գտնվող* ր-*ի դիմաց կոշտ* ռ (արծութ—առծաթ, առձաթ, էռծաթ)
արծաթ, արծիւ, արճիճ, բարդի. գորտ, զարթուն, թրթուր, խարտել, ծրտել, կուրծք, կրծիլ, չրչել, պորտ, պրծանել (պրծնել), վարտիք, ցուրտ, փ՚սրչ, փրփուր...

749. *Ռ ձայնորդի դիմաց* ր (առու—արու)
ախոռ, առնել, առնուլ, առու, բուռն, բռնել, թառ (նավի), խառնել, կռիւ, կռունկ, ուռնուլ, պատռել (պատառել), պտռել, ռեհան, ռռնիկ, սառ̈ել, վառ, վառել, փառք, փռել, քառասուն, քուռակ...

750. *Բառամիջում* դ, թ-*ից առաջ գտնվող* ր-*ի դիմաց խուլ շփական* շ (մարդ—մաշտ, մօշտ)

բուրդ, երդումն, երթալ, խորթ, կարդալ, նորթ, մորթել, մորթի, յարդ, վարդապետ, վարդավառ, օրթնել (օրհնել), օրթնանք (օրհնանք)

751. Ըս *հնչյունակապակցության դիմաց* շ (նարսն—նարս—նաշ)

նարսանիք, նարսն, ներքս>ներս, ոռս, ոռսալ, չորք—չորս

752. *Բառամիջի և բառավերջի* նր (-նդր//նտր) *հնչյունակապակցության դիմաց՝*

*ա)* ռ *ձայնորդ* (ծանր—ծառ)

*բ)* ր *ձայնորդ* (ծանր—ձար)

*գ)* յր *երկհնչյուն* (ծանր—ձայր)

ծանր, ծանրանալ, ծանրութիւն, մանր, մանրել // մանրանալ, մանրուք, սանտր, սանտրել...

753. *Բառամիջի* նգն, նկն *հնչյունակապակցությունների դիմաց՝*

*ա)* նն (ցնկնել—ցընննել)

*բ)* յն (ցնկնել—ցըյնել)

*գ)* ղն (ցնկնել—ցըղնել)

*դ)* գն (ցնկնել—ցըգնիլ)

ընկնել *(անկանել)*, կանգնել, ցնկնել, եղունկ(ներ), ծունկն(եր), ունկն...

754. *Բառամիջի* նլ//լն *հնչյունակապակցությունների դիմաց առնմանական՝*

*ա)* լլ (բանալի—բանլի—բալլի)

*բ)* նն (բանալի—բանլի—բաննի)

անալի>անլի, բանալի>բանլի, ելանել>ելնել. լինել, խըլնոտ, շլնի...

755. *Բառամիջի* տր *հնչյունակապակցության դիմաց՝*

*ա)* յր (կտրել—գըյրել)

*բ)* ռ (կտրել—կըռել)

ընտրել, կտրել, կտրին, կոտրել, պատրոյգ, Պետրոս, փետրել...

756. *Բառամիջի* տն *հնչյունակապակցության դիմաց առնմանական* նն (գիտենալ—գիննալ)

գիտենալ, գտանել (գտնել), գորտնուկ, խրտնել, յայտնել, մատն, մատնոց, մտանել (մտնել), ոտն, քրտնել...

757. *Հին* մուկն տիպի *բառերի՝*

*ա)* ն-*ի անկում* (ամառն—ամառ)

*բ)* ն-*ի պահպանում՝ գաղտնավանկի դրափոխությամբ* (ամառն—ամառնը)

*գ)* ն-*ի անկում՝ գաղտնավանկի* ը-*ի պահպանմամբ* (ամառն—ամառը)

ակն, ամառն, ատամն, արմուկն, դաղձն, դառն, երդումն, թոռն, ինն, ինքն, խառն, խուփն, ծունկն, կամն, կուռն, հարսն, ձուկն, մութն, մուկն, նուռն, շուրթն, ողն, սառն, սերմն, տասն...

758. *Բառասկզբի* սկ, սպ, ստ, զգ, զբ... *հնչյունակապակցություններով սկսվող բառերում* ը-*ի տեղը՝*

*ա) բառասկզբում* (ստանալ—ըստանալ)

*բ) առաջին բաղաձայնից հետո* (ստանալ—սըտանալ)

սպիտակ, սպիտակել, սպանանել (սպանել), սկեսուր, սկսանել (սկսել), ստանալ, Ստեփան, ստեղծել, զգենուլ, զգոն, զբաղիլ, զբոսնիլ...

**759.** *Բառասկզբի* զգ, սկ, սպ, ստ... *կապակցությունների* զ, ս-*ի* անկում (սկեսուր—կեսուր)

զգենուլ, սկեսուր, սկեսրայր, սպաս, սպանանել (սպանել), սպիտակ, ստեպղին, ստեղծել, ստերջ, Ստեփան...

**760.** Ր ձայնորդի *անկում՝ բաղաձայնական կապակցություն-ներում* (դուրս—դուս, տուս, թուս)

արժան, արժել, բաղարջ, բարձր, բորբոս, դուրս, իրք, խար-շել, խնդրել, մանրել, չրաղաց, սերկևիլ...

**761.** *Միջձայնավորային բաղաձայնների ոչ անմանական և ոչ իմաստակիր կրկնություն* (ածել—աձձիլ)

ազատ, ամէն, ամօթ, ասել, թափել, լիզել, լծել, լսել, խմել, խոթել, խօսել, կամաց, մածուն, վազել...

**762.** *Պայթականներից ու կիսաշփականներից առաջ ն-ի հա-վելում* (ճանաչել—ճանանչել)

աղիք, ամաչել, եղին, թրիք, կամուրջ, կանաչ, կանաչել, կտուց, ճանաչել, մեծ, մէք, ufng, փոթ, քիթ...

**763.** Եր *հնչյունակապակցության մեջ հավելական դ-ի առ-կայություն* (ծանր—ծանդր)

ծանր, ծանրութիւն, ծանրանալ, ծունր, (Հենրիկ), մանր, մանրել, թոնիր (թոնրի), պանիր (պանրի)

դերանուններում՝ նա—նրա (ընդրա, ընդուր), նրանք—ընդ-րանք...

**764.** Մր (մռ) *հնչյունակապակցության մեջ հավելական բ-ի առկայություն* (համարել—համրել—համբրել, ըըմ-բարիլ)

համարֆ, համարել (համրել), զմուռս, արմաւ—ամրաւ (ամբ-րավ), ճմռել, ամառն—*սեռ.* ամռան, ամուր, օմր «*կյանք*»...

765. Սր *հնչյունակապակցության մեջ հավելական* ա-*ի առկայություն՝ հատկապես* սա, այս *ցուցականների թեք հոլովաձևերում.* սրա—ըստրա

սրանֆ—ըստրանֆ, ըստոնֆ, այսորիկ—էսոր, էստուր, ըստուր...

(հուր-հուտր)

766. *Հավելական* ըր *բառավերջի բաղաձայնից հետո* (ճիւղ—ճօղըր)

բոռ, բոհինչ (բըռէշնըր, պըռէշնըր), զկեռ, զմուռս, թուզ, թուք, խէժ, ծառ, ծիղ, կայծակ, կանկառ, կեմ, կոեզ, կրունկ, ճիւղ, սինձ...

767. *Բառասկզբում ձայնավորից առաջ՝*

*ա) խուլ* հ-*ի առկայություն* (ագի—հագին, հաֆու)

*բ) ձայնեղ* հ՛-*ի առկայություն* (ամբար—հ՛ամբար)

ագի, ալեւր, ածել, անիծ, արբենալ, արձակ, երբ, երինջ, ընկեր, ընտրել (հըընդրել), ինչ, ինչպէս, ինչֆան, ո(ով), ոլորել, ոչիլ, ող, ոլունֆ, ուղի, ուռ...

ամբար, ամէն(այն), ականջ, անձրև, աշխարհ, առաջ, առաջին, արդար, արծաթ, արջ, եղունգն, երեկոյ, իմանալ, իջանել, ուր, ուրիշ...

768. *Փոխառյալ բառերի բառասկզբի* ռ-*ից առաջ՝*

*ա) ձայնավորների առկայություն* (ռուս—ըռուս, ուռուս)

*բ) ձայնավորների բացակայություն* (ռուս)

ռաստ//րաստ, ռանգ//րանգ, ռաղ//րաղ, ռուփ//րուփ, ռւռուփ, Ռաֆիկ//Րաֆիկ...

*769. Օտար բառերի ֆ-ի դիմաց՝*

*ա) խուլ շփական ֆ* (ֆլան, ֆիթիլ)

*բ) շնչեղ-խուլ պայթական փ* (փլան, փիթիլ)

ֆեհմ, ֆանդ, ֆասոն, ֆայտոն, ֆանար, ֆերմա, ֆինջան, ֆիդան, ֆիթիլ, ֆլան, ֆշանգ, ֆրանկ...

*770. Օտար բառերի բառասկզբի ղ-ի դիմաց՝*

*ա) ղ շփական՝ ինչպես գրական լեզվում* (ղarիք)

*բ) ետնալեզվային խուլ շփական* խ (խarիպ)

*գ) կոկորդային ձայնեղ կիսաշփական* ղ̂ (ղ̂arիք)

*դ) կոկորդային խուլ պայթական* կ̂ (կ̂arիք)

*ե) ետնալեզվային խուլ պայթական* կ (կarիք)

ղազ, ղազան, ղալմաղալ, ղամմազ, ղայիմ, ղասսաք, ղավուrմա, ղarիք, ղափաղ, ղոչ, ղոնաղ, ղսմաթ, ղrաղ, ղութի, ղուշ, Ղուկաս, Ղազar...

*771. Բառական շեշտի դիրքը՝*

*ա) վերջին վանկում* (կատաղե՛լ, կատղե՛լ)

*բ) վերջընթեր վանկում* (կատա՛ղել, կըտա՛ղել)

*գ) այլ տեղում*

ալեorել, աղանձել, arածել, arտասուf, բաժանել, բarկանալ, բarձrանալ, ղաղarել, ծarաւել, հաւանել, հաւատալ, մատանի, մոռանալ, շալակել, պառաւել, սատակել, վաrarել, տասանոց, ցամաfել, փաքաթել...

*772. Բառաթեքման ժամանակ փակ վանկի շեշտազրկված ի ձայնավորի՝*

*ա) պահպանում* (սիրտ—սիրտի)
*բ) փոխարկում ը-ի* (սիրտ—սըրտի)

| | |
|---|---|
| գիժ-գժի | վիզ-վզի |
| ծիլ-ծլի | տիկ-տկի |
| կիր-կրի | սիրտ-սրտի |
| պինչ-պնչի | ֆիթ-ֆթի |

773. *Բառաթեքման ժամանակ բառավերջի բաց վանկի ի ձայնավորի՝*
*ա) պահպանում* (գինի—գինիի)
*բ) փոխարինում հոլովիչով* (գինի—գինու)

| | |
|---|---|
| գոտի-գոտու | մատանի-մատանու |
| ճայելի-ճայելու | մորթի-մորթու |
| խնամի-խնամու | ջորի-ջորու |
| կաշի-կաշու | փոշի-փոշու |

774. *Բառաթեքման ժամանակ փակ վանկի շեշտազրկված ու ձայնավորի՝*
*ա) պահպանում* (ջուր—ջուրի)
*բ) փոխարկում ը-ի* (ջուր—ջըրի)

| | |
|---|---|
| թուփ-թփի | մուխ-մխի |
| թութ-թթի | թուր-թրի |
| թուզ-թզի | կուժ-կժի |
| ծուխ-ծխի | ջուր-ջրի |
| ճուճ-ճճի | ցուրտ-ցրտի |

775. *Բառաթեքման ժամանակ բառավերջի բաց վանկի ու ձայնավորի՝*
*ա) պահպանում* (լեզու—լեզուի)
*բ) փոխարկում* վ *բաղաձայնի* (լեզու—լեզվի)

թթու-թթվի    մեղու-մեղվի
լեզու-լեզվի    հարսնացու-հարսնացվի
կատու-կատվի    փեսացու-փեսացվի
կկու-կկվի    մսացու-մսացվի
(լու-լվի, ձու-ձվի, բու-բվի)

*776. Բառաթեքման ժամանակ փակ վանկի շեշտազրկված* է *ձայնավորի՝*

*ա) պահպանում* (էշ—էշի, ձէթ—ձէթի)
*բ) փոխարկում* ի *ձայնավորի* (էշ—իշու, ձէթ—ձիթի)

դէզ-դէզի    ձէթ-ձէթի
դէմ-դէմի    (շէն-շէնի)
էշ-էշի    սէզ-սէզի
խէժ-խէժի    սէր-սիրո
կէս-կէսի    տէր-տիրոջ

*777. Բառաթեքման ժամանակ փակ վանկի շեշտազրկված* ա *ձայնավորի՝*

*ա) պահպանում* (ճակատ—ճակատի)
*բ) փոխարկում* ը*-ի* (ճակատ—ճըկատի)
*գ) կորուստ* (ճակատ—ճակտի)

դանակ-դանակի    շալակ-շալակի
կաքավ-կաքավի    պառակ-պառակի
հավատ-հավատի    քաղաք-քաղաքի
ճակատ-ճակատի    քացախ-քացախի
մախաթ-մախաթի    փարախ-փարախի

*778. Տալ հետևյալ բառերը բարբառային արտասանությամբ.*

աղաւնի (*-աղունիկ, յէղվընէկ, ղունի, ըղօնէ...*)
աղեղն (*աղէղ, անէղ*)
աղտ (*ախտ, յէխտ, կէխտ...*)

աղտոտ (ախտոտ, յէխտուտ, կէխտոտ...)
այգի (էքի, իգի, իկկա...)
այգողք (էգնահող, ինքնափող, իգնահողէք, նիգնավէղ...)
այս (աս//էս, ասի//էսի, ասիգա//էսիկ, ասիկակ)
այդ (ադ//էթ, էդ, ադի//էդի, ադիկա//էդիկա, ադեկակ...)
այն (ան//էն, անի//էնի, անիկա//էնիկ, անիկակ...)
անանուխ (անուխ, նանուխ, նանա...)
անուն (անուն, հանուն, անում, անըմ...)
առաւօտ (ըռավօտ, ռավօտ, ըռութանա...)
առնել (այրնել, այնել, անել, էնել, ընել, արիլ...)
արտասուք (արտասունք, ըրտասուք, արցունք...)
բռնել (բըռնել, պըռնել, փըռնիլ...)
գիշեր (գըշէր, կըշէր, քիշէր, քըշէր...)
գրտնակ (կյըռտնակ—վըրթանակ...)
դգալ<տարգալ (գըթալ, տըքալ, քըթալ, թըքալ, գᵒⁱգᵒⁱլ...)
եկեղեցի (յէկէղէցի, է․լէ․ղէցի, ագէղէցի, էղէցի, գըղէցէ, յէխցէ...)
լնուլ (լըցցել, լըցնել, լնուլ, իլուլ, լըլնիլ, լըլուշ...)
խստոր (խստոր, սըխտոր, սըխտուր...)
կաթն (կաթ, կաթնը, կախց...)
կորիզ (կո․րինձ, կորիզ, կոռեզ, կըղազ...)
կրեայ (կրիա, կուրիա, կիրիրա...)
հիմա (հիմա, հիմակ, հիմի, հիմիկ, մկա, մըհէգ...)
հօրաքոյր (հօքիր, աքիր, հաքու(ր)...)
հօրեղբայր (հօրօխպեր, խօրօխպէր, խօրպէր, հէրբար, հէբի...)
ճանապարհ (ճանապար, ճանփա, ճամփա, ճամբախ...)
մասուր (մասուր, մահասուր, մըհասուր...)

**մրջյուն** *(մրջուն, մուրջում, մրչիմնը, վիրչիմնը...)*
**մորաքույր** *(մորքուր, մոքիր, աքիր, մաքուր...)*
**յորանջել** *(հորանջել, ըրըշտոտիլ, օրոշկոտալ...)*
**նապաստակ** *(նապաստակ, լըպըրաստակ, ալապաստրակ...)*
**ներքս** *(նըքսի, նէրս, նէս, նի...)*
**նավթ** *(նավթ, նաֆթ, նօթ, նօխթ...)*
**նման** *(նըման, մընան, լըման, ըլման...)*
**նմանել** *(նըմանիլ, մընանիլ, լըմանիլ, ըլմէնիլ...)*
**շոր** *(շոր, շուրթ, շէրթ...)*
**շուրջ** *(շուռ, շօռ, ժուռ...)*
**ոզնի** *(վօզնի, կուզնիկ, կուզնի...)*
**ուղարկել** *(յըղըրկել, ղըրկել, խըրկել, օղորկել, ղուրկիլ...)*
**ուղեղ** *(ըղուղ, ըղօղ, ղօղ...)*
**ուղղորդ** *(ըղօրդ, օղորթ, ղօրթ, աղօրթ...)*
**պարապ** *(պարապ, հըպարապ...)*
**ջրյորդան** *(չըրթան, չըրթօն, չուռթկան, չըռիկ...)*
**սա** *(սա, սայի, իսա, իսի, սայիգա, սավի, սվիգա...)*
**դա** *(դա, դայի, իդա, իդի...)*
**նա** *(նա, նայի, ինա, ինի, ինանը...)*
**սալոր** *(սալոր, սալվոր, շըլոր...)*
**սեամ** *(սէմ, շէմք...)*
**վիշապ** *(վիշապ, հօշապ, հուշափ, ուշաբ)*
**տալ(գ.)** *(տալ, տալվ...)*
**տեսանել** *(տեսնել, տենալ, տեհնիլ, տինիլ, ցուլ...)*
**փոխինդ** *(փոխինդ, փոխինձ...)*
**քսան** *(քըսան, կըսան...)*
**օրհնել** *(օրթնել, օխնել, օշնել...)*
**օրհնանք** *(օրթնանք, օխնեք, օշնանք...)*

## Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

### ՍՈՒՏԱՍԱՆԸ

Լինում է, չի լինում մի թագավոր։ Էս թագավորը իր երկրում հայտնում է. «Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան»։

Գալիս է մի հովիվ։ Ասում է.

— Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում։

—Կպատահի,— պատասխանում է թագավորը։— Իմ պապն էլ մի չիբուխ ուներ. մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկնում, արեգակիցը վառում։

Սուտասանը գլուխը քորելով դուրս է գնում։

Գալիս է մի դերձակ։ Ասում է.

— Ներողություն, թագավոր, ես վաղ պիտի գայի, ուշացա։ Երեկ շատ անձրև եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու։

— Հա, լավ ես արել,— ասում է թագավորը,— բայց լավ չէիր կարկատել. էս առավոտ մի քիչ անձրև թափվեց։

Սա էլ է դուրս գնում։

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կռնատակին։

—Դո՞ւ ինչ ես ուզում, այ մարդ,—հարցնում է թագավորը։

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտք, եկել եմ տանեմ։

— *Մի կոտ ոսկի՞,—զարմանում է թագավորը։— Սուտ* ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտք։

Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

— Չէ, չէ, ճշմարիտ ես ասում,— խոսքը փոխում է թագավորը:

— Ճշմարիտ եմ ասում՝ մի կուտ ոսկին տուր:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Նախաբան . . . . . . . . . . 5

1. Հայերենի բարբառագիտական ատլասը, նրա նշանակությունը 5
2. Նյութերի հավաքման ծրագրի անհրաժեշտությունը . . 6
3. Ծրագրի բովանդակությունը . . . . . . 6
4. Ծրագրի կառուցվածքը . . . . . . . 7
5. Նյութերի հավաքումն ըստ ծրագրի . . . . 11
6. Տառադարձման սկզբունքները . . . . . 19

Բառային զուգաբանություններ . . . . . . 25

Հասկացական-բառանվանողական զուգաբանություններ . 25

Բառիմաստային զուգաբանություններ . . . . . 71

Քերականական զուգաբանություններ . . . . . 76

Հնչյունական զուգաբանություններ . . . . . 112

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի
անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

*ՎՖ 04325 Պատվեր 93 Հրատ. 4571 Տպաքանակ 2000*

*Հանձնված է շարվածքի 7/II 1977 թ., Ստորագրված է տպագրության 10/V 1977 թ.։ Տպագրական 8,88. մամուլ, Հրատ. 5,0 մամուլ, պայման. 6,22 մամուլ, Թուղթ № 1, 70×108 1/32, գինը 44 կոպ.։*

*Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.*

Издательство АН Армянской ССР, Ереван, 19, Барекамутян 24 г.

*Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչության Երևանի տպարան*

ԳԻՆԸ 44 Կ.

A 14611